


Խոսելով նիւյսանց հետ

«Ու՛ն ներես, ի՛նչք ներես»
Նրանուշ Խոստարյան-
Առաքելյան

«Երանի նրանք
զնացած չլինեին»
Լեյլա Նեյզի

ISBN 978-3-88513-779-5



9 783885 137795

19-0
16



«Մեծահասակների կրթության և
բանավոր պաշտոնության ավանդը
Հայ-Թուրքական հաշտեցման
գործում»

Խոսելով միմյանց հետ՝
Անձնական հիշողություններ անցյալի մասին
Նայաստանում և Թուրքիայում

«Ու՛մ ներես, ի՛նչը ներես»

Նրանուշ Խառարյան-Առաքելյան

«Երանի նրանք գնացած չլինեին»

Նայկալան հիշողությունների բերը Թուրքիայում

Լեյլա Նեյզի

Նրարարակիչ՝
Գերմանիային ժողովրդական բարձրագույն դպրոցների միության
Միջազգային համագործակցության ինստիտուտ

ISBN: 978-3-88513-779-5

Ծրագրի համակարգողներ՝ Մաթիաս Քլինգներբրգ, Վանյա Իվանովա, Նազարեթ Նազարեթյան
Խմբագիր՝ Անահիտ Նարությունյան
Թարգմանություն անգլերենից հայերեն՝ Մամվել Սիմոնյան
Դիզայն և էջադրում՝ Մարաթոն Դիզզիևի - maraton@dizgievi.com
Թուրքիայի բամբակի ֆոտոնկարներ՝ © Սիբել Մարսուդյան
Շապկի լուսանկարը՝ © Փարաջանովի թանգարան, Երևան
Տպագրությունը՝ MAS Matbaacılık A.Ş.
Նամիդիյե Մահալլեսի, Մողուկտու Ճաղղեսի, Նո. 3 Կաղըրհանն-Իսվանբուլ - Թուրքիա
☎ +90 212 294 10 00 - info@masmat.com.tr


Անհար հեղինակների անունների՝ փակ հրապարակված հոդվածներում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Նրարարակիչի և խմբագիրների կարծիքների հետ: Սույն հրապարակությունը կամ դրա մասերը կարող են վերարտադրվել, եթե կա պարզաձև հղում աղբյուրին: Նրարարակիչը խնդրում է տրամադրել ամեն այսպիսի վերարտադրման պարճենները:

Բիբլիոգրաֆիկ փնդակարվությունը հրապարակված է Գերմանական Ազգային Գրադարանի կողմից
Գերմանական Ազգային Գրադարանը գրանցել է սույն հրապարակությունը Գերմանիային Ազգային Բիբլիոգրաֆիայում (Deutsche Nationalbibliografie), մանրամասն բիբլիոգրաֆիկ փնդակարվությունները մաքչելի են ինտերնետի միջոցով հետևյալ կայքում՝ <http://dnb.d-nb.de>.

© 2010 dvv international

dvv international
Օրերն Վիլհելմսփրասս 32 - 53225 Բոնն
Գերմանիայի Դաշնային Նախապետություն
Տեղ. +49/228-975 69-0
Փաքս. +49/228-975 69-55
info@dvv-international.de
www.dvv-international.de

Ներագա փնդակարվության համար խնդրում ենք նայել նաև հետևյալ կայքը՝
www.learningtolisten.de



Ազգաբնակչության հետազոտությունների հայկական կենտրոն «Հազարաշեն»
Armenian Center for Ethnological Studies "Hazarashen"



Funded by the
Federal Republic of Germany



9H
Դս-76

Խոսելով միմյանց հետ՝ Անձնական հիշողություններ անցյալի մասին Նայաստանում և Թուրքիայում

«Ու՛ն ն երես, ի՛նչը ն երես»
Նրանուշ Խառապյան-Առաքելյան

«Երանի նրանք գնացած չլինեին»
Նայկակյան հիշողությունների քեռը Թուրքիայում
Լեյլա Նեյզի



«Մեծահասակների կրթության և բանավոր պարմության ավանդը
Նայ-Թուրքական հաշիբեցման գործում»

Բովանդակություն

Նախաբան	7
Երախագրագիտության խոսք	9
Նախաբան- Խոսելով միմյանց հետ՝ Անձնական հիշողություններ անցյալի մասին Նայաստանում և Թուրքիայում	11
Ներագոյություններ Նայաստանում՝ «Ու՞մ ներես, Ի՞նչը ներես» Նրանուշ Խառափյան-Առաքելյան	13
Նամատո՞ր պարմական ակնարկ	15
«Ու՞մ ներես, Ի՞նչը ներես»՝ բանավոր պարմությունների աղբյուրները	17
«Սեփական պարմություններ»	19
Հիշողությունների հիշողություններ	21
Անցյալի հիշողությունների ծիսականացումը	28
Էրգրի հողն ուժեղ է, Էրգրի մրգերն անուշ են, Էրգրի ջուրը կտունկի աչքի նման գուլալ է.....	33
Անցյալը ներկայում, ներկան անցյալում (Իմ հորս անունը Սերոբ է, իմ մորս անունը՝ Սոսե).....	36
«Փառք մեծ, Աստված, որ իմ երեխան մարտի, անմեղ մեռավ, մի թուրքի պեղք չեղավ».....	45
«Մրանց երեսն ածիլված չէ, իսկ սուլթանի հրամանն է ածիլող երեսներով փղաներին սպանել» (Ավերիս Քեշիշյանի պարմությունից)	48
Ջուրը, կրակը, անապարհ	51
Ջարդ, կոտորած, փախեփախ, գաղթ, արսոք, եղեռն, գենոցիդ	55
«Նրանք մեզնից պակաս չեն կորցրել, ինչ ճիշտն ա՝ ճիշտն ա».....	57
«Դե դրանք էլ մարդ են»	59
Խոսել թե լռել, ասել թե չասել («Իմ ծնողները խուսափում էին խոսել դրա մասին»)	62
«Զգիլեմ...»	67
«Ալմաստ քան, գրի՛, գրի՛»	69
«Պապաս փանը մեզ պարմում էր»	77
«Մեր փունը քանդված էր...»	83
Զրուցակիցների [ռեսպոնդենտների] ցանկերը [աղյուսակները].....	93

Ներագոյություններ Թուրքիայում՝ «Երանի նրանք գնացած չլինեին»	
Հայկական հիշողությունների բեռը Թուրքիայում - Լեյլա Նեյզի	103
«Երանի նրանք գնացած չլինեին». հայկական հիշողությունների բեռը Թուրքիայում.....	105
Գալիլեոյի մենությունը՝ Պապիկ, ովքե՞ր են այս <i>Գյափուրները</i>	112
Ինչպե՞ս հաշտվել ֆանտոմային ցավի հետ.....	116
Մարդկանց և ընտանիքի զաղտնիքների մասին.....	120
Սոսիի կանաչ աչքերը՝ ինչու՞ եմ ես փարբեր.....	124
Փորձանքը վերևից եկավ.....	127
Ներսիս ի՞նչ, որ մայրս հայ է.....	131
Նարսանիքը և անեծքը- «Ինչպես՞ կարող էր այս գյուղն այսպիսի վերջ ունենալ».....	134
Ամոթ և նախադիմք՝ ի՞նչ պարահեց, որ իմ թոռը հայերեն չի խոսում.....	139
Երեք բևեռները: Ի՞նչ ենք մենք, և դրա՞յր.....	143
Քաղաքը կորցնելու վախը.....	146
«Ես քեզ մոռանալու համար չէի սիրում».....	149
Արարափի հմայքը.....	154
«Գիշերվա մարդկանց» պարմությունը.....	158

ՆԱԽԱԲԱՆ

«Մեծահասակների կրթության և բանավոր պարմությունների ավանդը Հայ-Թուրքական համաձայնությանը» ծրագիրը սկսել է 2009 թվականի օգոստոսին Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության Միջազգային Համագործակցության Ինստիտուտը (*dvv international*), համագործակցելով Անադոլու Կուլտուր և Ազգաբանական հերագոյությունների հայկական կենտրոն Հազարաշեն կազմակերպությունների հետ, Գերմանիայի Արքաքին Գործոց Նախարարության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն էր նպաստել այս փարածաշրջանի համաձայնության գործընթացին, նախաձեռնելով բանավոր պարմության պրոֆեսիոնալ հերագոյությունների միջև բաց երկխոսության ծավալումը:

Այս ծրագիրը շարունակում է *dvv international*-ի ջանքերը իր գործունեության հիմնական ոլորտներից մեկում՝ մեծահասակների կրթության շրջանակներում, շփվելով անցյալի և գործ ունենալով ոչ շար վաղ անցյալի զգայուն հարցերի հետ: Ավելի քան փասնիկց փարիների ընթացքում *dvv international*-ը զբաղվում է հաշտությանը վերաբերող գործունեությամբ՝ ոչ շար վաղ անցյալի զգայուն հարցերի հետ փոխկապակցված ժամանակակից ակնապեսների հետ: Այս ձևով էր սրբեղծվել *dvv international*-ի Պարմության Ցանցը, որը ներառում է փարբեր փարածաշրջաններում իրականացված մի շարք հաջող ծրագրեր:

Ծրագիրը Ռուսաստանում զբաղվում էր հիմնականում գերմանական բանակի և Կարմիր Բանակի նախկին զինվորների հաշտեցմամբ: Նարավ-Արևելյան Եվրոպայում ուշադրության կենտրոնում էին ոչ վաղ անցյալի ուսուցման և կրթության ինտերակտիվ մեթոդները, այդ թվում՝ բանավոր պարմությունների մեթոդը (www.historyproject.dvvinternational.org): Ժամանակակից ակնապեսների հետ աշխատելու Ռուսաստանում հաջողությամբ կիրառված մեթոդները Ուզբեկստանում փորձարկվեցին (համաշխարհային սրճարան, կենսագրական մեթոդ, հարցազրույցներ ժամանակակից վկաների հետ), հարմարեցվեցին և Խորհրդային անցյալի վերըմբռնման նպատակով օգտագործվում են Կենտրոնական Ասիայում: Ուզբեկական ծրագիրը «Պարմություն և ինքնություն» ծրագրի շրջանակներում նախաձեռնվել է *dvv international*-ի կողմից DAAD-ի, FES-ի, GI-ի և Գերմանիայի դեսպանատան համագործակցությամբ և անցյալ փարի Տաշքենդում իրականացավ արդեն հինգերորդ անգամ (www.istoriya.uz): Ծրագրի նպատակն անցյալի մասին բազմապեսակերպային իրազեկվածության բարձրացումն է:

2008 թվականի հոկտեմբերին *dvv international*-ը Հայաստանում կազմակերպեց բանավոր պարմության թեմաներին նվիրված հայ-թուրքական աշխարածողով՝ «Պարմություն և ինքնություն- Կատուցելով կամուրջներ և ընկախության և ընթրևան համար»: Մասնակցում էին երկու երկրների բաղաբացիական հասարակությունների ներկայացուցիչներ, պարմաբաններ, մշակութային մարդաբաններ, բանավոր պարմության մասնագետներ: Ընթացիկ ծրագրի հայեցակարգը մշակվել է այդ աշխարածողովի ժամանակ և մենք հիմա ուրախ ենք ներկայացնել դրա արդյունքներից մեկը:

Մենք կցանկանայինք մեր երախարագիությունը հայտնել Լեյլա Նեյզիին և Նրանուշ Խառապյանին՝ երկու երկրների հիմնական հերագոյողներին նրանց կարարած ողջ աշխարանքի համար և մեր գործընկեր Անադոլու Կուլտուր և Ազգաբանական հերագոյությունների հայկական կենտրոն Հազարաշեն կազմակերպություններին՝ Թուրքիայից և Հայաստանից, Գերմանական Գիտական Փոխանակումների Ծառայությանը (DAAD) երկու երկրներում էլ, որոնք մասնակցում էին ուսանողների

ընտրության գործընթացին, ինչպես նաև բոլոր փորձագետներին և ուսանողներին, ովքեր այս ծրագիրը ենթարկող դարձնելու համար ներդրեցին իրենց սրբերն ու պրոֆեսիոնալիզմը: Նախուց շնորհակալություն ենք հայտնում Միբիլ Չեքմենին այս հրապարակությունը տպագրության նախապատրաստելու իր բոլոր ջանքերի համար:

Մաթիաս Զինգենբերգ, Վանյա Իվանովա, Նազարեթ Նազարեթյան, - div international-ի թիմ

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Այս գիրքը համագործակցության արդյունք է. շարերն են մասնակցել դրա կայացման գործին՝ անհամար, որոնց երախտապարտ ենք: Առանց նրանց մասնակցության այս հեղափոխությունը լույս չէր տեսի: Նրանուշ Խառապյան-Առաքելյանը և Լեյլա Նեյզին խորապես երախտապարտ են Գերմանիայի Դաշնային Նախարարության արտաքին գործոց նախարարությանը և Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միություն (div international) կազմակերպությանը այս ծրագիրը ֆինանսավորելու համար: Նախապես շնորհակալ ենք div international-ի Բոննի գրասենյակը ներկայացնող, Ասիայի բաժանմունքի ղեկավար, ծրագրի համակարգող Մաթիաս Զինգենբերգին, որ ներկայացնում է, Նազարեթ Նազարեթյանին՝ div international-ի Նայասարանի գրասենյակի ղեկավարին, div international-ի հարավարևելյան տարածաշրջանային գրասենյակի աշխատակցուհի Վանյա Իվանովային, որոնց ջանքերի շնորհիվ այս ծրագիրն իրականություն դարձավ: Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Թուրքիայի և Նայասարանի գործընկերներին՝ «Անատոլիայի մշակույթ» (Anadolu Kültür) կազմակերպությանը՝ հանձին Օսման Կավալայի և «Ազգաբանական հեղափոխությունների հայկական կենտրոն-Նազարաշեն»-ին՝ հանձին Արա Գուլանի:

Նայասարանում և Թուրքիայում այս ծրագրի իրականացման ընթացքին ուղեկցող աշխատաժողովներին շարերն են շնորհակալ մասնակցություն ունեցել և խորհուրդներ փոխել՝ Անուշ Նովհանիսյանը (ՏՏ գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտություն ինստիտուտ), Լուսինե Խառապյանն ու Գայանե Շազոյանը (ՏՏ գիտությունների ազգային ակադեմիայի Նազգիտության և ազգագրության ինստիտուտ), Միքայել Զույանը (Վ.Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարան), Սամվել Կարաբեկյանը (Երևանի պետական համալսարան), Քրիստինա Կոլոտրին (Պետրոսյանի համալսարան), Գյունեյ Գյուլսու Օզդոզանը (Մարմարա համալսարան) և Նազան Մաքսուդյանը (Բեռլինի Բարձրագույն դասընթացների դպրոց): Դիլիջանում 2009 թ. հոկտեմբերին կազմակերպված ամառային դպրոցին Թուրքիայից և Նայասարանից մասնակցած քսան ուսանողները հեղափոխում դարձան ծրագրի և գիտահեղափոխական գործընթացի անբաժան մասնակիցը: Կցանկանայինք շնորհակալություն հայտնել Վիկտորիա Ասարյանին, Աննա Մարիա Ալանոլոլոին, Լուսինե Ավագյանին, Էլիֆ Էզեին, Մարիամ Գրիգորյանին, Սեդա Գրիգորյանին, Սևակ Նարությունյանին, Նանե Խաչատրյանին, Ավերիս Քեշիշյանին, Իսմաիլ Կեշիշին, Նորա Միլանոլոլոին, Նայաթ Մուրադյանին, Սայդ Օզթուրքին, Աննա Պողոսյանին, Մեհմետ Փոլաթոլոլոին, Մյուհթան Սադրամին, Նամիկ Սահակյանին, Օզգյուր Թաշքայային, Նորայր Երզնկյանին և Դիլան Յիլդիրիմին: Մեծապես կարևորելով նրանց մասնակցությունը ամառային դպրոցին՝ բարձր ենք գնահատում նաև նրանց ավանդը դաշտային աշխատանքներում:

Թուրքիայում հեղափոխությունն իրականացվել է շար պարասխանաբուր և նվիրված գործընկերների և ուսանողների խմբով: Լեյլա Նեյզին կցանկանար երախտագիտություն հայտնել իր օգնականներին՝ Էզգի Գյունեյին, Նայդաթ Դարիչին և Միբել Մաքսուդյանին՝ ծրագրին առնչվող բոլոր հարցերում նրանց թե՛ մրավոր, թե՛ բարոյական օգնության ու տրամադրանքի և ոչ պակաս հաճելի ընկերակցության համար: Էզգի Գյունեյը և Նայդաթ Դարիչին վարել են հարցազրույցները և իրենց ավանդը ներդրել տեքստի շարադրանքում, Միբել Մաքսուդյանը արել է բոլոր լուսանկարները և իր նպաստը բերել գրքի ձևավորման գործին: Շար ուսանողներ, ներառյալ նրանք, ովքեր մասնակցում էին Մարանջի համալսարանի բանավոր պարմության դասընթացներին, 2009 թ. աշնանը Էսկան նպաստ են բերել հեղափոխության ընթացքին: Լեյլա Նեյզին շնորհակալություն է

հայրնում նաև Մելմա Աֆջանին, Ռամազան Արասին, Յասին Արասին, Վելաթ Ային, Չենկ Չենգիզին, Էմիրի Քուլիջին, Սևալ Դակմանին, Սեդա Դոզանին, Բուրջու Էզեին, Էլիֆ Էզեին, Սինեմ Էսենին, Թևֆիկ Կարաթոփին, Սելեն Կիզիլթոփրակին, Ասի Մենևեսին, Նորա Միլղանոլուին, Նայաթ Մուրադյանին, Օզգն Նամին, Էսրա Օլթային, Բերաթ Մերյեմ Էրենեկին, Լեներ Օզարային, Սայիդ Օզթուրքին, Էդա Տարակին, Նորա Տարադյանին և Այսեգյուլ Յայլաին: Նրանուշ Խառադյանը խորապես երախտապարտ է Անուշ Նովհաննիայանին, Միթայեղ Ջոլյանին, Գայանե Շազոյանին, Արա Գուլյանին և Լուսինե Խառադյանին, ովքեր, ընդհանուր աշխարհաժողովներին մասնակցելուց բացի, իրենց մասնագիտական խորհուրդներով օժանդակել են նաև գրքի հայկական մասի վերլուծության ընթացքին:

Նայ և թուրք ուսանողների համալրել ընկարկումների և հեղափոխողների աշխարհաժողովների երբեմն դժվարին պահերը իր բարի հույսերով մշտապես մեղմում էր dvv international կազմակերպության հայկական գրասենյակի աշխատակից Վարուժան Ավանեսյանը, որին ջերմորեն շնորհակալություն են հայտնում թե՛ թուրք, թե՛ հայ գործընկերները:

Նեղինակները խորապես երախտապարտ են բոլոր անձանց, ովքեր համաձայնեցին ներկայացնել իրենց կենսագրության դժվարին պարմությունները և սիրահոժար ու պարբերապես պարասխանեցին հեղափոխողների հարցերին:

ՆԱԽԱԲԱՆ ԽՈՍԵԼՈՎ ՄԻՄՅԱՆՑ ՆԵՏ. ԱՆՁՆԱԿԱՆ ՆԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ ՆԱՅԱՍԱԿՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ

Այս գիրքը «Մեծահասակների կրթության և բանավոր պարմության ավանդը հայ-թուրքական համաձայնության գործին» գիրահեղափոխական ծրագրի արդյունքն է, որն իրագործվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միություն (dvv international) կազմակերպության հովանու ներքո 2009թ. օգոստոսից 2010 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում և ֆինանսավորվել է Գերմանիայի Արտաքին Գործոց Նախարարության կողմից: Ծրագրի գործընկերներն են Նայասարանում «Նազարաշեն» Ազգաբնական հեղափոխությունների հայկական կենտրոնը և Թուրքիայում մշակույթի և արվեստի ոլորտներում գործող «Անատոլիայի մշակույթ» (Anadolu Kültür) կազմակերպությունը: Ծրագրի հիմնական նպատակը մեծահասակների կրթության, միջմշակութային փոխանակումների և բանավոր պարմության հեղափոխությունների միջոցով Նայասարանի և Թուրքիայի հասարակությունների միջև կապեր ստեղծելն է:

Ծրագրի գործողությունների մեջ ներառված էր Նայասարանում Դիլիջանում 2009թ. հոկտեմբերի 8-14-ը կազմակերպված ուսանողական ճամբարը, ուր հայասարանցի և Թուրքիայից եկած քսան համալսարանական ուսանողներ մասնակցեցին բանավոր պարմության դասընթացներին: 2009թ. հոկտեմբերից 2010թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում, Նայասարանի գիտությունների ազգային ակադեմիայի Նազիրության և ազգագրության ինստիտուտի գիրաշխատող Նրանուշ Խառադյան-Առաքելյանը Նայասարանում իրականացրեց բանավոր պարմության հեղափոխություն: Նույն ժամանակահատվածում նմանարիպ հեղափոխություն իրականացվեց Թուրքիայում Սրամբուլի Սարանջը համալսարանի պրոֆեսոր Լեյլա Նեյզիի ղեկավարությամբ: Երկու երկրներում էլ համալսարանական ուսանողներն ակտիվորեն մասնակցել են հեղափոխություններին:

Բանավոր պարմությունը համեմատաբար նոր և Նայասարանում ու Թուրքիայում ավելի ու ավելի բարձր գնահատվող հեղափոխական մեթոդաբանություն է: Բանավոր պարմություններով զբաղվող պարմաբաններն անցյալը ներկայում իմաստավորելու համար ուսումնասիրում են, թե ինչպես են հասարակ մարդիկ պարմում պարմական իրադարձությունները: Անցյալի մասին հիշողություններում մենք օգտվում ենք բազմակի աղբյուրներից՝ մեր սեփական փորձից և հիշողություններից, ավելի փարեց սերունդներից փոխանցված հիշողություններից, պարմությունից և լրատվամիջոցներից:

Ներազգրության կյութերի աղբյուրը Թուրքիայի և Նայասարանի փարբեր փարածքների ու փարբեր սոցիալական միջավայրերի անհար անձանց՝ հարցազրույցների միջոցով գրանցված կյանքի պարմություններն ու ընդանիքների անցյալի վերականգնված հիշողություններն են: Ծրագրի նպատակներից էր նաև «Եր-հիշողությունները» հեղափոխելը. ինչպես են մարդիկ պարմում այն իրադարձությունների մասին, որոնց անձամբ չեն մասնակցել, բայց որոնց մասին նրանց պարմել են փարեցները: Նայկական փորձի հիշողությունները Թուրքիայում ուսումնասիրելու նպատակով հեղափոխողները վարել են «բաց ավարտով» կյանքի պարմության հարցազրույցներ, որոնք զրուցակիցներին հնարավորություն են տալիս ակտիվորեն մասնակցելու հարցազրույցի օրակարգի մշակմանը և սեփական պարմությունները կառուցելու գործընթացին: Նախկապես կարևոր էր հարցազրույցի օրակարգը նախապես ընտրելու փորձը՝ հաշվի առնելով թեմայի քաղաքական նրբությունը և հանրային ոլորտում, հարկապես լրատվամիջոցներում այս բարդ հարցի քննարկման սահմանափակ փիրույթը: Մեր նպատակն էր պարզապես լսել մարդկանց և ուսումնասիրել, թե ինչպես են նրանք որպես փորձ սուբյեկտիվորեն ընկալել, հիշել, պարմել և մեկնաբանել այս խոշորագույն պարմությունը: Գիրքը հասցեագրված է գլխավորապես Նայասարանում և Թուրքիայում բնակվող հասարակ մարդկանց: Գիրքը հրատարակվել է:

թորքերն, հայերն, ինչպես նաև, լսարանն ընդլայնելու նպատակով, անգլերեն լեզուներով: Այս գրքում փորձել ենք ներկայացնել մեր հարցազրույցներին մասնակցածների կյանքի պարմությունները և մեկնաբանությունները՝ հնարավորինս իրենց իսկ բառերով: Ձևերով և նաև լուսանկարներ: Գիրքը բաժանված է երկու մասի: Մի մասը, որի հեղինակը Ն.Խառապյան-Առաքելյանն է, ներկայացնում է Նայասարանում անցկացված հեղափոխության արդյունքները («ՈՒ՛մ ներես, Ի՛նչը ներես»): Այս մասը շարադրված է հարցազրույցների ընթացքում գրանցված պարմություններից 35-ի նյութերով: Մյուս մասը, որի հեղինակը Ալլա Նեյզին է, ներկայացնում է Թուրքիայի ամբողջ տարածքում անցկացված ավելի քան հարյուր հարցազրույցների հեղափոխության արդյունքները («Երանի նրանք գնացած ջիններին»՝ հայկական հիշողությունների բեռը Թուրքիայում): Թուրքիայում անցկացված հեղափոխության արդյունքները ներկայացված են 13 անհատներին վերաբերող կարճ պարմվածքների և համապատասխան լուսանկարների տեսքով:


Ո՛րն է հիշողությունների կարևորությունը Նայասարանի և Թուրքիայի հասարակություններում: Երկու դեպքում էլ, անշուշտ փարբեր ձևերով, անցյալը մեծ ճնշում ունի ներկայի վրա: Նայ հասարակությունում 1915թ. մասին հիշողությունը հիմնականում անհատների պարմություններում փարբեր ձևերով արտահայտված բռնության հիշողությունն է: Թուրքիայում հիշելու (և մոռանալու) ձևերը փարբերույթ են և կախված են համայնքներից: Տարբեր և անգամ հակասական են հասարակական դիսկուրսը, լոկալ և անհատական (եզր)հիշողությունը: Երկու հասարակությունների ճակատագրերն էլ արմատապես փոխվել են անցյալի հեղևանքով: Անցյալի հեղ կապված շար բաներ փարբեր ճանապարհներով լուրջան է մտնում, և այդ լուրջանն անցած փարբերների ընթացքում լուրջ մարտահրավերներ է առջացրել: Երկու երկրներում էլ հրամայական պահանջ է հեղափոխել այն հարցը, թե ինչպես է անցյալն ընկալվում ներկայում, որովհետև անցյալը, հարկապես հիշողության և եզր-հիշողության միջոցով վերականգնվելու շնորհիվ, մեծ արժեք ունի ներկայի և ապագայի համար: Այնուհանդերձ, երկու երկրների միջև շար քիչ են հուշերի հեղ կապված համեմատական հեղափոխությունները և երկխոսությունը:

Նաշվի առնելով երկու երկրների փոխկապակցված պարմությունը և Նայասարանի ու Թուրքիայի՝ հակամարտային անցյալի հեղ հաշվելու ու համաձայնության գալու առկա բարդ գործընթացը, ակնհայտ է, որ այսպիսի հեղափոխությունը կարող է նշանակալի նպաստ բերել ժողովրդավարացման և համաձայնության հասնելու հարցերին: Անցյալի հեղ հաշվելը՝ մի կողմից, և ներման հասնելը՝ մյուս կողմից, կարող են այս երկու հարևանների խաղաղ ապագայի գրավական դառնալ:

Որպես պարմության գործակալներ հասարակ մարդկանց ընտրելով և անցյալի իմաստը ներկա ժամանակում հասկանալու համար որպես միջոց հիշողություններն օգտագործելով, բանավոր պարմության մեթոդաբանությունը հեղափոխողի և պարմող-գրուցակցի ստեղծագործական մասնակցության ու համագործակցության միջոցով հնարավորություն է տալիս թարմ տեսակետ ունենալու անցյալի վերաբերյալ: Բանավոր պարմության շարադրանքները հիմնված են խոսակցական լեզվի և մտքերի, հույզերի վրա, որոնք սերնդեսերունդ հեղք են թողնում մարդկանց վրա և կարող են անխոս կամ անարտահայտելի լինել: Հիշողությունները բնագրային հավաստիություն ունեն և դրանով իսկ փարբերվում են բուն պարմական իրադարձություններից՝ ներկայացնելով ա՛յն անհատի իրականությունը կամ ճշմարտությունը, ով վերհիշում է իր անցյալը: Այնպես, ինչպես սահմանների բացումը հնարավոր է դարձնում մարդկանց ֆիզիկական շփումը, պարմությունների գեղեղունը մի գրքում կողք կողքի, Թուրքիայում և Նայասարանում մարդկանց միմյանց հեղ խոսելու և միմյանց լսելու հնարավորություն է տալիս: Մենք հուսով ենք, որ այս ծրագիրն իր ներդրումը կունենա անցյալին, ներկային և ապագային վերաբերող ինչպես հեղափոխական, այնպես էլ՝ երկու հասարակությունների միջև երկխոսություն ծավալելու գործընթացին: Մեր՝ Նայասարանի և Թուրքիայի հեղափոխողներին համար մասնակցությունն այն ստեղծագործական գործընթացին, որին հանգեցրեց այս ծրագիրը, փաստորեն հենց նման մի փորձ էր՝ խոսելու և լսելու փորձ, երկխոսության փորձ:

Ներազոտություններ Նայասարանում՝ «Ու՛մ ներես, Ի՛նչը ներես»

Ն ր ա ն ո շ Խ ա ռ ա փ յ ա ն - Ա ռ ա ք է լ յ ա ն



Համառոտ պատմական ակնարկ

Այսօրվա Հայաստանի բնակչության պատկերացումներն ու վերաբերմունքը թուրքիայի և թուրքերի, հայ-թուրքական հարաբերությունների հնարավորությունների մասին զգալիորեն ձևավորվել են Օսմանյան թուրքիայում XIX դարավերջին սկսված և 1915-1922 թթ. իր տրամաբանական ավարտին հասած հայկական Եղեռնի՝ ջարդերի և աքսորի հետևանքով և այդ ջարդերի մասին ԽՍՀՄ-ում ու Խորհրդային Հայաստանում տրևական ժամանակ պահպանվող պաշտոնական լուրջ պայմաններում:

Ռյուզանդիայից Օսմանյան թուրքիային անցած պատմական Հայաստանի արևմտյան հատվածում¹ /որը սույն տեքստում երբեմն հիշվում է Արևմտյան Հայաստան անունով/ և թուրքիայի այլ տարածքներում ապրող հայերից նրանք, ովքեր փրկվեցին ջարդերից ու աքսորի ճանապարհներին, ապաստանեցին պատմական Հայաստանի՝ 20-րդ դարի սկզբում ծարավան Ռուսաստանի կազմում գտնվող հատվածի՝ Արևելյան Հայաստանի տարածքում, ներկայիս Միքիայում, Իրաքում, Լիբանանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Իրանում, Հունաստանում, Ռուսաստանում, Վրաստանում և այլուր: Նրանց մի մասն այս երկրներից հեռագայում արագազաղթեց արևմտաեվրոպական երկրներ ու Ամերիկա մայրցամաք: Այդ տարիներին տարբեր երկրների կառավարություններ ու ժողովուրդներ օգնեցին մեծ թվով հայերի, որբանոցներ բացեցին, որոնք երկար ժամանակ դարձան որբացած երեխաների գոյատևման միակ հնարավորությունը: 1920-ական թթ. արաբական բոլոր երկրների, Հունաստանի, Ռուսաստանի, Վրաստանի քաղաքներն ու գյուղերը լեցուն էին փայտե ինքնաշեն տներով և պարսպարված հայերով, որոնք, մի կողմից, աշխատանք էին փնտրում, մյուս կողմից՝ փնտրում էին իրենց անհետացած, կորած զավակներին, ծնողներին, քույր-եղբայրներին, հարազատներին ու ծանոթներին, որոնց հետ միասին սկսել էին աքսորի դժվարին ճանապարհը և այդ ճանապարհներին բազմաթիվ հարձակումների ենթարկվելով՝ կա՛մ միմյանց կորցրել էին, կա՛մ առավել փրկարների, կյուճվածներին հարկադրված թողել ճանապարհներին: Կորուսվելը սգալու ժամանակ չկար, կենդանի մնացածները պետք է հոգային միմյանց մասին՝ կրկին ապրել սկսելու համար: Սգալու ժամանակ չկար, բայց կորածներին, անհետացածներին պետք էր գտնել, և փրկվածները շրջում էին նորաբաց որբանոցներում: Կանանց ու ամուսիններին կորցրած երկրասարդները միանում էին՝ միմյանց նեցուկ լինելու և իրենց փրկված երեխաներին ուրբի կազնեցնելու համար:

¹ Մուլթան Արդուլ Համիդ Բ-ի կառավարությունը Հայաստան անունը փոխարինեց Քրդստան կամ Անադոլիա անուններով: 1880 թվականից սկսած պաշտոնական փաստաթղթերում արգելվեց Հայաստան անվան հիշատակումը: Արդուլ Համիդի օրոք թուրքական պետական անգլամեր գործիչ, մեծ վեզիր, Քյամիլի փաշան այս մասին գրում է. «Մենք և Անգլիան չենք ճանաչում «Հայաստան» բառը, և հարկավոր է ջարդուփշոք անել այն ծնոքը, որը կհամարձակվի նույնիսկ արվասանել այս բառը: Ներսարար, այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է այս հայ ազգն անհետ մարքել երկրի երեսից, անողորմարար ոչնչացնել» (Новая история Армении в трудах современных зарубежных авторов, отв. редактор Саакян Р. Г., Ереван, 1993, էջ 15,17): 1923 թ.-ից սկսած Արևմտյան Հայաստանի տարածքը պաշտոնապես կոչվեց «Արևելյան Անադոլիա» (Հայկական սովետական հանրապետության, Երևան, 1974, էջ 327: Հայկական համառոտ հանրագիտարան, Երևան, 1990, էջ 192-193): XVI դարի «Բաղամական աշխարհացոյց» քարտեզում (Բաղամական աշխարհացոյց» քարտեզը կազմվել է 1570-ական թթ., տրամագիծը 28.5 սմ, պահպանվում է Բողլյան գրադարանում, Օրսֆորդ -Չեռ. օր.317 f9v-10r) (տե՛ս Գալսյան Ռ., Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, էջ 148) և XVIII-XIX դարերի օսմանյան քարտեզներում Հայաստան երկիրը նշվում է «Էրմենիստան անով» («Ասիական թուրքիա», հրատարակվել է 1803/1804թ., չափանիշը 72x54 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-ՕԻՕԸ 14999.հ.2(2), ֆ.18, «Միջերկրական շրջան»-ի երկրորդ քարտեզ, չափանիշը, 80x58 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-ՕԻՕԸ 14999.հ.2(2), ֆ.5., «Օսմանյան երկիր», տպագրվել է 1867թ., չափանիշը, 42x29 սմ, Թրիտանական գրադարան, Լոնդոն-Maps 42.d.1, ֆ.2 (տե՛ս Գալսյան Ռ., նույն տեղում, էջ 226, 240, 246)):

Պարմական Նայասրանի ռուսական հարվածը՝ Արևելյան Նայասրանը լցվել էր որբերով, սովյալներով, հյուձված ու անբուն մարդկանցով, որոնք ամեն անցողից մի կտոր հաց էին խնդրում: Նաց մուրացողները հաց փալու հնարավորություն ունեցողներից շար էին: Առաջին աշխարհամարտին մասնակցող Ռուսաստանի կազմում գրեթե Արևելյան Նայասրանի բնակչությունը թե՛ պարերազմի, թե՛ Ռուսաստանի տեսական ներքաղաքական խնդիրների, թե՛ թուրքահայերի՝ ջարդերի վերածված ճգնաժամի հերևանքով դժվարին շրջան էր ապրում: Այստեղ զգալի թվով թրքախոս¹ մահմեդական բնակչություն կար, որի համակրանքը թուրքիայի կողմն էր: Ռաբի ջարդերից փրկված հայերը կարեկցանք ու օգնություն կարող էին փնտրել միայն Նայասրանի ոչ մեծաթիվ հայ բնակչության միջավայրում: Էջմիածնի կաթողիկոսարանի, հայկական բարեգործական կազմակերպությունների պաշարները չէին բավականացնում փրկվածներին նույնիսկ առաջին անհրաժեշտության պարենով ապահովելու համար: Նոգնած, վախեցած, որբացած, ջարդված մարդկանց կուրակումներում շուրջով համաճարակային հիվանդություններ սկսվեցին, և կոտորածներից փրկվածների մի մասը զոհ գնաց հիվանդություններին, ցրփին ու սովին: Այդ փարիներին Էջմիածնի ու Երևանի փողոցներով ամեն օր դիակառքեր էին անցնում՝ հավաքելով վերքերից, սովից, ցրփից, համաճարակային հիվանդություններից, հյուձվածությունից մահացած մարդկանց դիակները:

1916-1917 թթ. որոշ փախստականներ վերադարձել էին հայրենի բնակավայրեր, իսկ 1919 թ. փախստականների և արքայազանների շրջանում լուր փարածվեց, որ թուրքիայում հեղաշրջում է եղել, և հայերը կարող են վերադառնալ իրենց հայրենիք: Ոմանք հավարացին և մեծ դժվարություններով վերադարձան: Նախճիրը, սակայն, կրկնվեց, և հայրենի բնակավայրերը վերադարձած հայերը, 1918-1922 թթ., նոր զոհեր փալով, կրկին փախստական դարձան, իսկ թուրքիայի արևմուտքում կրկնակի արքայական: Վանի շրջակայքի ջարդերի երկրորդ ալիքը 1918 թ. գարնանն էր: Ահա այս դեպքերն ուղղակիորեն դարձան թուրքիայի և թուրքերի մասին հայերից շար-շարերի պարկերացումների և հիշողությունների հիմնական աղբյուրը և թուրքիայի ու թուրքերի հանդեպ վերաբերմունքի վերածնալորման հիմքը:

Թուրքիայի և թուրքերի հանդեպ վերաբերմունքը, սակայն, բարձրաձայնված չէր, քանի որ բուլշևիկյան Ռուսաստանը բարեկամարար էր փրամադրված քեմալական թուրքիայի հանդեպ, և 1920 թ. հեփո բուլշևիկյան Նայասրանը չէր կարող Ռուսաստանից, հեփազայում՝ ԽՍՀՄ-ից զարվող վերաբերմունք ունենալ: Ռաբի Խորհրդային Նայասրանի պաշտոնական գաղափարախոսությունն անթույլատրելի էր համարում թուրքիայի մասին բացասական կարծիք արտահայտելը, և Նայասրանի հայերի վերաբերմունքը թուրքիայի ու թուրքերի հանդեպ հիմնականում մնում էր անհարակալ-ընդանկան շրջանակներում:

Նայասրանի Նանրապետության բնակչության՝ ցեղասպանությունից փրկվածների այսօրվա սերնդի ընդանկան հիշողությունները և պարկերացումները թուրքերի մասին և դրանց ազդեցությունը Նայասրանի ընդհանուր բնակչության կարծիքի վրա արգասցված են սույն աշխարհագրի համար որպես աղբյուր ծաղայած ընդանկան կենսագրությունների կյուրերում:

1 Տվյալ դեպքում «թրքախոս» տերմինն ընկրվել է այդ խմբի ինքնության ընդհանրական տերմինի բացակայության պարճառով: XX դարի սկզբին նրանց ինքնանունը կրոնական պարկանելությամբ էր արտահայտվում «մուսուլման»: Ռուսական տեղեկատու աղբյուրները Նարավային Կովկասի թրքալեզու մուսուլմաններին անվանում էին «կովկասյան թաթարներ», հայերը՝ «թուրքեր»:

«ՈՒՄ ՆԵՐԵՍ, ԻՆՆԸ ՆԵՐԵՍ». «ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Սույն աշխարհագրում օգտագործվել են բացառապես 2009 թ. հոկտեմբերից Նայասրանի Նանրապետության փարածքում ձայնագրված կենսագրական հիշողությունները: Այլ աղբյուրներ՝ հրափարակված կամ արխիվային, ինչպես նաև ցեղասպանությանը վերաբերող հեփազություններ, վերլուծություններ այս շարադրանքում չեն օգտագործվել: Նյութերը գրանցվել են հիմնականում Եղեռնից փրկվածների երկրորդ, երրորդ սերնդի միջավայրում, մեծ մասամբ՝ նրանց ընդանկաններում, որոշ դեպքերում՝ աշխարավայրերում: Ընդանկաններում մեկ անձի ձայնագրելիս հաճախ գրույցին մասնակցել են նաև ընդանկի այլ անդամներ: Գրանցված բոլոր պարմություններից այս աշխարհագրում օգտագործվել են 35-ը, չնայած ամփոփումների փրամաբանության վրա, անկասկած, ազդել են բոլոր գրույցները և դիփարկումները: Աշխարհագրում այս կամ այն ձևով հիշարակվող գրուցակիցների ցանկը՝ լուսանկարներով և նրանց մասին համառոտ տեղեկություններով, կցվում է հրափարակությանը՝ որպես հավելված: Բոլոր գրուցակիցներին խնդրվել է պարմել իրենց ընդանկի վերջին երեք-չորս սերնդի կենսագրությունը՝ հնարավորինս ամբողջական ու մանրամասն՝ այնքանով, որքանով կարող են հիշել կամ տեղյակ են իրենց նախնիների պարմածներից: Պարմողներին տեղյակ է պահվել, որ նրանց ընդանկան պարմությունները գրանցվում են հայ-թուրքական հարաբերությունների հեփազության նպարակով, սակայն խնդրվել է չսահմանափակվել միայն սեփական ընդանկի «թուրքական անցյալով»: Բոլոր գրուցակիցներին տեղյակ է պահվել, որ նրանց հիշողությունները և արտահայտած կարծիքները կամ դրանցից առանձին հարվածներ կարող են հրափարակվել: Մեր բոլոր գրուցակիցները համաձայնվել են թե՛ իրենց անունների, թե՛ լուսանկարների, թե՛ պարմությունների հրափարակությանը, բացառությամբ երկու կանանց, ովքեր այսօր կապ ունեն թուրքիայի հեփ, մեկն ամուսնացած է Սփամբուլում, մյուսն առերրական կապեր ունի Սփամբուլի հեփ: Նրանց անունները թե՛ ռեսպոնդենտների ցանկում, թե՛ տեքստում փոխված են: Բոլոր պարմությունները ձայնագրված են, ռեսպոնդենտներից փրամութի հեփ գրույցի ընթացքը նկարահանված է, արվել է շուրջ 500 լուսանկար: Ձայնագրված պարմությունները սղագրվել են, և մեր ձեռքի տակ ընդհանուր առմամբ ավելի քան 1000 էջ տեքստային նյութ կա: Վիշողություններն ընդգրկում են մեր գրուցակիցների ընդանկանի պարմության փարքեր փուլեր:

Բոլոր ձայնագրությունները, նկարահանումները, լուսանկարները, տեքստերը պահվում են ծրագրի ղեկավար, սույն շարադրանքի ինդիվիդուալ Վ. Խառափյանի անձնական արխիվում, սակայն առաջիկայում դրանք կհանձնվեն ՎՎ ԳԱԱ Ննագիտության և սոցազության ինտիտուտի արխիվին:

Նարադրանքը կառուցված է այն փրամաբանությամբ, որ արտացոլի թուրքիայի և թուրքերի հանդեպ վերաբերմունքի հիմք ծառայող որոշակի նյութեր: Տեքստում պարմողների նյութերից մեջբերումներն առանձնացված են շեղարտերով: Իրականում ինեց դրանք էլ կազմում են բուն շարադրանքը, և մեր 35 պարմողներին իրավամբ կարելի է համարել սույն աշխարհագրության ինդիվիդուալներ: Այդ իսկ պարճառով տեքստի վերջում աղյուսակով ներկայացվում է շարադրանքի իրական հեղինակների անվանացանկը՝ նրանց լուսանկարներով և նրանց մասին համառոտ տեղեկություններով, ինչպես նաև նրանց հարազատներից որոշ լուսանկարներ, եթե պարմություններում այդ հարազատների մասին հիշվել է և եթե նրանց լուսանկարները գրեվել են:

Նարադրանքի վերջում հրափարակվում են երեք կենսագրություններից քաղված հարվածներ: Դրանցից մեկը բովանդակում է դրվագներ թուրքիայի փարածքում ընդանկի նախնիների անցյալից («Գրի՛, գրի՛, Այմասպ ջան»): Երկրորդը՝ ցեղասպանության

հերանքով հայրենիքից զրկված ընտանիքի դեզերումները, ԽՍՀՄ շրջանի հիմնախնդիրները և ընտանիքի մարդկային, նյութական ու հոգևոր ներուժի փոշիացումը: Այս պարամոթյունն ընտանիքի կենսագրությունը ժամանակագրորեն ներկայացնում է մինչև XX դարի 70-ական թվականները («Պապա Կարնը մեզ պարմում էր»): Երրորդ պարամոթյունը վերաբերում է Եղևնից փրկվածների այսօրվա սերնդի կյանքում կարևոր դեր խաղացող մի խնդրի, որ պայմանականորեն կարելի է անվանել «վերադարձ անցյալին», և ներկայացնում է հայրենիքի փնտրության խնդիրը («...Մեր տունը թանդված էր...»):

Շարադրանքում տեղանունները ներկայացված են այն ձևով, ինչպես նրանք առկա են մեր պարամոթյունների հուշերում: Քանի որ պարամոթյունների հիշողությունները մեծ չափով վերաբերում են 20-րդ դարի սկզբի դեպքերին, նրանց կողմից հիշարակվող տեղանունների մի մասը կարող է չհամապատասխանել Թուրքիայում և Նայասպահում ներկայումս գործածվող տեղանուններին: Երկու երկրներում էլ կարգավիճակ է բնակավայրերի, մասամբ նաև աշխարհագրական անունների փոփոխություն: Նայերի կողմից օգտագործվող տեղանունների դեպքում սա հիշարակելը կարևորվում է, քանի որ մասնավորապես Թուրքիայում 1913թ. մայիսի 13-ին ընդունված «Գաղթականների բնակեցման կանոնադրություն» (“İskân-ı Muhacirin Nizamnamesi”) փաստաթղթով հիմնավորում է Թուրքական կայսրության տեղանունների համակարգված թրքացումը, իսկ 1916թ. հունվարի 5-ին երկրորդ փոփոխության կառավարության ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանագրով (Emirname) արագացվում է “Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պարկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի... և այլ բոլոր անունների վերածումը թուրքերենի”¹: Այդ փարածքներից փախած և փրկված հայերը, բնականաբար, ծանոթ չէին նախկինում հայկական բնակավայրերի նոր, թրքացված անուններին և նրանց հետագա սերունդները գործածում են հիշողություններում պահպանված դրանց ավանդական ձևերը: Բոլոր դեպքերում տողապակերում որքան հնարավոր է փրկվում է հիշարակվող բնակավայրերի մի մասի տեղադրությունը:

Այս նախաբանում կարևորում են ընդգծել, որ ընտանեկան պարամոթյուններից հիշողությունների հարվածները, որոնք բերվում են հրապարակվող տեքստում և երբեմն պարունակում են դաժանության նկարագրություններ, «խոսում են» գլխավորապես այն մասին, որ թուրքերի և բրդերի հետ շփման սեփական փորձի՝ հիշողության մեջ ամրացված ամենակարևոր երևույթը մարդկանց և ընտանիքների կենսագրությունները փոխած կոնկրետ դեպքերն էին, որոնք միաժամանակ թուրքերի և ներկայումս Նայասպահի Նանրապետությունում ապրող հայերի փաստացի շփման վերջին շրջանն էին: Ցավոք, հենց դրանք էլ դարձել են այն հիմնական հիշողությունը, որ հաղորդվել է հետագա սերունդներին, և հենց դրանց վրա էլ հետագայում մեծ չափով ձևավորվել են պարկերացումները թուրքերի մասին: Այս գրքում այդ պարամոթյուններին անդրադառնալով միայն մի նպատակ ունի՝ իմանալ, թե ինչի վրա են խարսխվում ներկայիս պարկերացումները:

1 Yüksel A., Doğu Karadeniz Araştırmaları, İstanbul, 2005, s. 21-22.

«ՍԵՓԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Պարմական Նայասպահի ռուսական մասում՝ Արևելյան Նայասպահում բնակություն հաստատած փրկվածների համար խորհրդային կարգերի հաստատումից հետո ապրած դաժան փորձությունների մասին խոսելը բազմաթիվ արգելքներ ուներ: Թուրքիայի ու Խորհրդային Միության միջև հաստատված բարեկամական հարաբերություններից հետո Նայասպահում խորհրդային շրջանում թուրքերի մասին պաշտոնապես չի խոսվել, իսկ սրալինյան, մասամբ նաև հետսրալինյան շրջանում թուրքերի մասին նույնիսկ մասնավոր գրույցները, հիշողությունները պաշտոնական գաղափարախոսությունը մեկնաբանում էր որպես «դաշնակցական ազդեցիկ»¹, ազգայնականություն, դա հետապնդվում էր իշխանությունների կողմից: Այս մասին բազմաթիվ վկայություններ կան մեր գրանցած պարամոթյուններում: Վազգեն Ղուկասյանն իր մանկության փորձերի հիշողություններից պարմում է, որ երբեմն, հարկապես ծնունդ երկրները, տղամարդիկ հավաքվում էին իրենց տանը և գրույցի ընթացքում սկսում էին հայրենիքի կարոտի երգեր երգել: Այդ ժամանակ մայրը նրան կամ մեծ եղբորն ուղարկում էր փան կտորը՝ հեղուկ, որ գյուղում մարնիչի համբավ ունեցող մարդկանցից որևէ մեկի անցնելու դեպքում արագ լուր փային երգողներին, որովհետև նրանց կարող էին մեղադրել «հակասրալինիզմի» մեջ ու նույնիսկ աքսորել կամ գնդակահարել: Դա 30-ական թթ. շրջանն էր: Արեգոյ Մամիկոնյանը, ում ծնողները Նայասպահում հաստատվել են շար երկար դեզերումներից հետո՝ 1946 թ., իր մանկության շրջանի՝ 50-ական թթ. հիշողություններից պարմում է, որ իրենք միայն իրենց ընտանիքում էին խոսում կոտորված նախնիների մասին. «Էն սրալինյան ժամանակ վախը շար մեծ էր... Դրա համար ուրիշ մտք չէինք կարողանում խոսել, պարմել...»: Շար հեշտ էր ցանկացած մարդու, առավել ևս այդ անպաշտպան մարդկանց դեմ «ազգայնական» անվան փակ քաղաքական մեղադրանք հարուցել կամ մեղադրել քաղաքական թշնամի հայրաբարված դաշնակցության հետ կապերի համար: Դա էր կարևոր պարճառներից մեկը, եթե ոչ ամենակարևոր պարճառը, որ հայերի ընդհանուր ողբերգությունը, որը հետագայում սրացավ «Եղևն» անունը, Խորհրդային Նայասպահում մնաց որպես ընտանիքների և անհարների ապրած ողբերգություն, այսինքն՝ մասնավոր խնդիր, իսկ հանրային-խմբային հիշողությունները «վազվեցին» ընտանիքներում:

Քաղաքական-հասարակական քննարկումների կամ հրապարակային բացահայտ ցավակցության բացակայությունը թեման դարձրեց խորհրդավոր, իսկ հիշողությունները՝ անձնական, ընտանեկան, ազգակցական, այսինքն՝ մի փոքր «սեփական» և, որպես այդպիսին, ավելի խորքային: Նրանց, իսկ ավելի ուշ ծնվածների համար նրանց ծնողների հետ փոխ ունեցածը դառնում էր ընտանեկան պարմության նյութ, ընտանեկան ողբերգություն, ինչը երկրորդ սերնդի համար վերածվում էր նոր ողբերգության: 1930-ական թթ. մեծացել էին նաև որբանոցներում ապաստանածները, շարերը կրթություն էին ստացել, փորձում էին ընկալել փոքր ունեցածը, ընդհանրացնել: Բայց դա հակադրվում էր պաշտոնական գաղափարախոսությանը՝ այդ ցանկությունը որոշ իմաստով դարձնելով դիսիդենտական (այլախոհական): Այս ամենը, եթե չէր քաղաքականացնում մարդկանց հանրային վարքը, ինչն անհնար էր սրալինյան շրջանում, ապա առնվազն վարքի երկվություն էր առաջացնում և հարկադրում սեփական ողբերգության մասին բարձրաձայն խոսել կամ այդ ողբերգության վրա ուշադրություն հրավիրելու միջոցներ փնտրել: Եվ խոսում էին: Խոսում էին միմյանց հետ, պարմում վարանելի ծանոթների միջավայրում, գրում հիշողություններ: 1940-ական

1 Կոմունիստական գաղափարախոսությունը դաշնակցական կուսակցությունը ներկայացնում էր որպես հակակոմունիստական և ազգայնական կուսակցություն: Դաշնակցության հանդեպ համակրանքի ցանկացած դրսևորում դիվիդում էր որպես քաղաքական ընդդիմություն և պարճվում:



Չուր Նովոսիյանը մահացավ 1982թ. և շահացրեց փեսան 1926թ. որբանոցից «կորած» և 1987թ. գրված իր դարերը:

թթ.՝ ավելի, քան 30-ականներին: Երկրորդ աշխարհամարտի փարիներին, երբ Թուրքիան ԽՍՀՄ-ում ընկալվում էր որպես Գերմանիայի պոլիտեխնիկ դաշնակից, Արևելյան Նայաստանում թուրքերի ու Թուրքիայի մասին խոսելու արգելքը մասամբ մեղմացել էր:

Ընդհանրական ողբերգությունների թեման նորոգվում էր հարկապես կորածներին գրելիս: Իսկ կորածները միմյանց շարունակում էին գրել նույնիսկ փաստիկ փարիներ անց: Դաշտադեմի մեր բանասացի՝ Մուշեղ Գևորգյանի նախադարձը, որը փախել էր Վանի Արճեշից¹, մահացավ 1982 թ., իննսուներե անց փարիքում այդպես էլ փաստիկ փարեկան ժամանակ կորած իր դարերը չգրելով, բայց նրա մահից մի քանի փարի անց՝ 1987 թ., Մուշեղը գրավ իր նախադարձի դարերը՝ իր փարի արդեն ութսունամյա քրոջը՝ համշենահայ մի ընդհանրիկ պարվավոր փարին, գրավ Մուխոմի քաղաքի մերձակա գյուղերից մեկում: Նրան փախցրել և հերձնամուսնացել էր փրկի հայ երիտասարդներից մեկը, երբ որք երեխաներին Ամերիկա ուղարկելու նպատակով փարել էին Բաթումի նավահանգիստը՝ շոգենավ նստեցնելու: Տարի գրելու առիթով հավաքվել էին բոլոր դաշտադեմիները, բազմաթիվ վանեցիներ, սասունցիներ ու նաև մեծ թվով փրկացիներ: Եվ, իհարկե, այդ հանդիպման ընթացքում դարձյալ հիշեցին փարի մահացած մոր հուզառար կյանքը, որը շեն գերդաստանի միակ փրկված մարդն էր, հիշեցին գոհերին, կորածներին, որք երեխաների դառնությունները:

Մի շարք մնաց գրելով փարը Մուշեղի փանը, և այդ շարքավա ընթացքում նրա փունը դարձավ Վանի ու Մուշի փախստական գյուղացիների մերօրյա սերունդների ուխտաբեղի՝ նորոգելով վշտերը: Այդ պարմություններն անհամեմատ ավելի շար էին ազդում մարդկանց՝ Թուրքիայի և թուրքերի մասին պարկերացումների ձևավորման վրա, քան որևէ քարոզություն ու գաղափարախոսություն: Ուստի Նայաստանի բնակչության՝ Թուրքիայի և թուրքերի մասին պարկերացումների ձևավորման աղբյուրներում իրական «բանավոր պարմությունների» դերը շար մեծ էր, գուցե նույնիսկ ավելի, քան

պարմության հերազա ակադեմիական գրավոր շարադրանքը և հանրայնացումը:

1 Արճեշ- Արճեշ գրելում է Վանա լճի հյուսիսային ափին, լիճը թափվող Արճեշ փոքրիկ գետակի գետաբերանում: Տարբեր ժամանակներում Արճեշը հիշարակվում է իրրև գյուղ, ավան, քաղաք, բերդաքաղաք և նավահանգիստ: Վանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով հին Արճեշը աստիճանաբար անցնում է ջրի փակ, և մի փոքր հյուսիս, ավելի բարձրադիր վայրում հնրագայում կառուցել են Ալվանց անունը կրող (Նոր Արճեշ, թուրքերեն՝ Էրջիշ) քաղաքը, որը XIX դարի սկզբին ուներ 1500 փուն բնակիչ, մեծ մասը՝ հայեր: Իսկ XX դարի սկզբներին՝ ընդամենը 260 փուն հայ և քուրդ բնակիչ:

ՆԻՇՈՂՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐԻ ՆԻՇՈՂՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐ

Թանավոր պարմությունները որոշ չափով փարբերվում են ընդհանրական հիշողություններից, եթե մանավանդ դրանք բուն պարմությունների մասին երկրորդ-երրորդ սերնդի հիշողություններն են: Չնայած այս գիրքը վերնագրված է «Թանավոր պարմություններ», իրականում նյութերը «ընդհանրական հիշողություններ» են: Ընդհանրական պարմությունը բանավոր պարմություն է դառնում այն պահից, երբ պարմողը դառնում է դեպքերի մասնակից, մասամբ, թերևս, գործող անձ: Ընդհանրական անցյալի հիշողությունը գունե մասամբ «սոցիալականացված» պարմություն է. այն կրում է հիշողությունները փոխանցողների և, անշուշտ, նաև պարմողի սոցիալական անցյալի ու կենսափորձի կնիքը: Նայաստանի փարածքում սկսելով բանավոր պարմությունների մեթոդով նյութեր հավաքել հայ-թուրքական հարաբերությունների մասին՝ մենք հասկանում էինք, որ փվյալ սուրբկրկների՝ հայերի և թուրքերի հարաբերությունների փրկական բացակայության պարճատով դրանք չեն կարող դասական բանավոր պարմություններ լինել: Նայաստանի բնակչության ավելի քան 90 փուկոսն առևտվազն վերջին 80-90 փասնամյակներում թուրք չի փեսել, որպեսզի նրա հետ անձնական կենսագրական հիշողություն ունենա: Երբ սկսում էինք նյութերի հավաքումը, իրականում փորձում էինք գրանցել «հիշողություններ հիշողությունների մասին», մասամբ էլ գրանցել Թուրքիայի ու թուրքերի մասին պարկերացումների ու զգացմունքների անհարակառության աստիճանն ու հավաքական սոցիալական հիշողությունը թուրքերի մասին երկրորդային հիշողություն կրող մարդկանց միջավայրում: Իրականում, ինչպես վկայում են նյութերը, անհարակառ պարկերացումների ու հարաբերությունների փորձի բացառիկ սակավության, «կունկրտ դեպքերի պարմությունների հիշողությունների մասին հիշողությունների» կողքին մենք ունեցանք անհարակառ հիշողությունների վկայաբանական և անհարակառ հուզական-զգացմունքային հարուստ նյութ, որը, թվում է, գրեթե «ձանրաբեռնված չէ» հավաքական հիշողության ճնշմամբ: «Ես փեսնում էի, թե ինչպես է մայրս ամեն անգամ լաց լինում իր կորած քրոջը հիշելիս», կամ «Տարս ամբողջ կյանքում այդպես էլ ոչ մի փանով չարսախացավ: Նա դժվար մահացավ և անընդհարս ասում էր, որ դա իր մեղքի հարսուցումն է. ևս իր մանկապատանակ աղջկան թողել էր ճանապարհին... Էկել են ճանապարհի կեսին, չգիտեմ, շար դժբախտ պարմություն է, ճանապարհի կեսին սուրից չեն կարողացել հաց ձարել, որ կերցնեն: Չորս էրեխա են ունեցել, էլ մեկը գրկի էրեխա էր, աղջիկ էր: Էլ էրեխան էլ անընդհար լացել, լացել է: Ասում է՝ թուրքի էլ զինվորը անընդհար մոտենում էր ու խոխում, թե «շուր արս, հեղմի ընկի»: Ասում է՝ պարս ասել է՝ էլ էրեխին արի դենը արեղ, զևանք, էլի, ճամփին դենը, գունե էլ երեք տղաներին փրկենք... (պարմողը հուզվում է, լուծում է, փորձում է իրեն փրկապարել...): Տարս երկար էր մեռնում: Աչքերը բացում ասում էր՝ Էն էրեխի համար եմ ես փանջվում, որ թողել եմ: Միևն իր կյանքի վերջը չեն ընց ինքն իրեն (պարմողը կրկին հուզվում է, ձայնը դողում է, աչքերն արցունքով են լցվում), որ թողել է ճանապարհին» (Անահիտ Նովոսիյանի պարմածից): «Մայրս 14 փարեկան էր: Նրա մորն սարսնել էին իր աչքի առաջ, և ես հեղմ՝ առավորյան փեսել էր, թե ինչպես են զայլերը թե շենը պարտել իր մոր փորն ու կերել աղիքները: Մայրս մահացավ 80 փարեկանում և այդպես մեղկարով էլ զևաց այս աշխարհից: Չեք հավաքա, բայց ամեն օր պարսում ու լաց էր լինում Ալմաստ Նարությունյանի պարմությունից): «Տարս միշտ արեկությանը էր խոսում թուրքերի մասին» (Վարդ Աբաջյանի պարմությունից): «Տորս ամբողջ խոսածը իրենց փրկերը, իրենց վաթսան էր... իրենց հույսը, մեռան էլ, օրինակ, հերս երազը ընդեղ էր փեսնում, ընդեղի մասին: Ով հանդիպեր ու ասեր՝ ընդ, ու՞ր ես զևում, կասեր՝ «Էրգիր»... Միակ փախազը, միակ երազանքը ընդեղ էր, ով հանդիպեր, որ փողոցի, որ ծայրում որ հարցնեին, ասում էր՝ Էրգիր, Էրգիր, Էրայի հորս ու մորս գերեզմանի վրա, մի հար մեր փրկում ման զայի» (Վազգեն Ղուկասյանի պարմածից): «Գարեանը ծիլ-միլը որ ծիլը, իմ մեր փեսնում իր մեզ, զևում ինք սենց ևսում ինք կանաչին, երգում էր, դարդում էր, մրմում էր: Որ հիշում եմ, իմ մորս սիրտը ծարավ էր, դրս համար

էլ երգում էր, իր երկիր, աշխարհ փարսան...Մերս շատ խիփանդ էր, ասին՝ «բուր, վեր կաց էրթանը էրգիր, էրթանը խալքոնի հալքինը», ասեց՝ «սիսկի՛ր, ես չիմ կրես, որ դու կերթաս, կերթաս մեր փուս, որ մեռնիմ, կերթան կիսանին ընդե»։ *Տե՛նց էլ մեռավ*» (Գրիշ Բաղայանի քրոջ՝ Նոանհարի պարամածից)։ Այս հիշողությունները պարամոնները թուրք չեն փեսել, սրանք պարամոնների կենսագրության հարվածների վկայաբանական նյութեր են, երկրորդային հիշողություններ չեն, ընդ որում միանգամայն անհարական են և բոլորովին սոցիալական կամ կոլեկտիվ պարկերացումների «արտադրանքը» չեն։ Եվ չէին էլ կարող լինել, քանի որ, ինչպես ասվեց, Խորհրդային Նայաստանում «թեման փակ էր», և, բնականաբար, երկրի բնակչության մեջ Թուրքիայի ու թուրքերի վերաբերյալ սոցիալական գաղափարախոսության և փորձի կուրակում չի եղել, մարդկանց բանավոր պարամոններն, իսկապես, զգալիորեն անհարական են։ Մա կարևոր հաստատագրում է, քանի որ այդ պարամոններն, այնուամենայնիվ, իրականում մեծ չափով ընդհանրական են։ Այսինքն՝ Թուրքիայի ամենաբարբեր փարամոններում փրկված հայերի անհարական-ընթանեկան պարամոնները մեծ ընդհանրություն ունեն, որից էլ, ինչպես ցույց են փայտ նյութերը, ձևավորվել է ընդհանուր վերաբերմունքը։ Սրա կարևորությունն ընդգծում եմ՝ շեշտելով հանրային-սոցիալական ընդհանրական հիշողության գործոնի և դրա ազդեցության բացակայությունը¹։

Կրկին վերադառնալով Նայաստանում ցեղասպանության հրապարակայնացման խնդրին՝ պետք է ասել, որ 1960-ական թթ. հիշողությունները մասամբ «դուրս եկան ընթանիքներից» և 1980-ական թթ. երիտասարդ սերունդը, կրկին մասամբ, դադարեց «ընթանեկան հիշողությունների» ուղղակի կրողը և, կիսամարձակվեմ ասել՝ «գերին» լինելուց։ 1965 թ. ցույցերից, Երևանում Ցեղասպանության գոհերի հիշարակին նվիրված հուշարձանի կառուցումից², ապրիլի 24-ին ցեղասպանության գոհերի հիշարակին նվիրված հանրային քայլարշավների կանոնացումից հետո, դեռևս հանդիպելով իշխանությունների ակտիվ կամ պասիվ դիմադրությանը, Նայաստանում, այնուամենայնիվ, անհարական ու խմբային նախաձեռնություններով սկսեցին հուշարձաններ կառուցել, գրքեր հրատարակել, հողվածներ փրկագրել։ Դրան որոշ չափով նպաստեցին նաև Պարույր Սևակի «Անլուրի գանգակաբուն» պոեմի հրատարակումը, Նովիանենա Շիրազի՝ հարաբերականորեն հրատարակային, կարելի է ասել՝ փողոցային ու դահլիճային գրույցներն ու որոշ բանաստեղծությունների փրկագրությունը։ Պարույր Սևակի և Նովիանենա Շիրազի ստեղծագործությունները ձեռքից ձեռք էին փոխանցվում, կարդացվում ուսանողական խմբերում, փնթում։ Եղեռնից փրկված երեխաների՝ այդ փարիներին արդեն չափահաս դարձած հարվածի ու երկրորդ սերնդի կողմից ջարդերի մասին փանջող հիշողությունները «ներքևից» հրատարակայնացնելու վախժորած փորձեր արվեցին։ Ուշան գյուղում, որի բնակչությունը 1967 թ. նախաձեռնել է Անդրանիկի³ արձանի կառուցումը, փակական ժամանակ խնդիրներ են եղել փարբեր մակարդակների

1 Խորհրդային առաջին փարիներին այն, ինչն այս կամ այն կերպ կարող է դիտվել թեմայի հրատարակայնացում, առկա էր մասամբ պոեզիայում (Նովիանենա Թումանյան, Եղիշե Չարենց), մասամբ՝ գիտության մեջ։ 1928-1929 թթ. Բագրատ Բոբյանը կազմել է փաստաթղթերի ժողովածու՝ «Նայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ՍՄԿՄ-ը»։ 1946-1951 թթ. Սփայլիի՝ Թուրքիային ներկայացված փարամոնային պահանջների հետ կապված խորհրդային պարամոնության մեջ մասամբ արձարծվել է հայերի կողմից լքված փարամոնների խնդիրը, բայց, մի կողմից, երևույթը համակողմանի չի ներկայացվել, մյուս կողմից՝ այդ քննարկումներն ամբողջովին դուրս էին փրկվածների միջավայրից, և նրանք ուղղակիորեն ո՛չ մասնակցում էին քննարկումներին, ոչ էլ նույնիսկ այդ ընթացքում զանգվածային կամ հանրային արտահայտման հնարավորություն ունեին։ Խնդիրը մնում էր բարձր քաղաքականության ոլորտում, և հանրությունը մեծ հաշվով անհաղորդ էր մնում առանձին մարդկանց փաստապարբերին։

2 Մեծ Եղեռնի գոհերի հիշարակին նվիրված հուշարձանի բացումը փետի ունեցավ 1967 թ. նոյեմբերի 28-ին։

3 Անդրանիկ Թորոսի Օգանյան, ծնվ. 1865 թ. Շապին Գարահիսարում, (Շապին Գարահիսար- քաղաք և գավառ Արևմտյան Նայաստանի Սեբաստիայի նահանգում, համանուն գավառի վարչական կենտրոնը), մահացել է 1927 թ. Սակրամենտոյի մոտ (ԱՄՆ)։ Մասնակցել է ինքնապաշտպանական կռիվներին՝ աջի ընկնելով անձնական արիությանը։ 1904 թ. դուրս է եկել Արևմտյան Նայաստանից, 1907 թ. փեղափոխվել է Բուլղարիա։ Մասնակցել է Բալկանյան պարերազմին (1912-1913թթ.)։ Առաջին աշխարհամարտի փարիներին նշանակվել է հայկական կամավոր առաջին ջոկատի հրամանատար ցարական Ռուսաստանի բանակի կազմում՝ աջի ընկնելով Վանի, Բիթլիսի, Մուշի գրավման ժամանակ։ 1916-1917 թթ. մեծ աշխարհային պատերազմից հետո կարգավորվել է կարգաբերականների օգնություն կազմակերպելու գործում։ Կռիվներ է վարել կովկասյան ճակատում։ 1919 թ., հիասթափվելով Անտանտի քաղաքականությունից և գեղվելով ՄԿ կառավարության հետ, գործարել է իր գունդը և հեռացել արաբաստան։ 1922 թ.-ից ապրել է ԱՄՆ-ում։ Պարզևարբվել է Ռուսաստանի, Բուլղարիայի, Նուսաստանի, Ֆրանսիայի բարձրագույն գիմնոզիական պարզվներով։ Անդրանիկի աճյունն ամփոփվել է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանարանը։ Նա ամենաախրված

իշխանությունների հետ։ Արձանը կառուցելու և փեղադրելու գումարը գյուղացիներն են հավաքել։ Այն փեղադրվել է 1967 թ. ապրիլի 11-ին (ուջանցի Սարիբեկ Թովմասյանի պարամածից, ով Անդրանիկի արձանի փեղադրման ժամանակ եղել է ընդամենը 13 փարեկան)։ *«Մի գիշերվա մեջ, թաթուն, գյուղի ժողովուրդը Անդրանիկի արձանի փեղադրման վայրի պարը կառուցեց։ Շատ լավ հիշում եմ՝ երբ բերեցին, ինչ բերեցին, ոնց բերեցին, ինչ մեքենայով բերեցին։ Գիշերվա ժամը 1:30-2:00-ի մոտ արձանը մեքենայով բերեցին, փեղադրեցին։ Բոլորս՝ մեծ ու փոքր, օգնում էինք։ Ես էլ էի այնպեղ։ Գիշերը թաթուն էին փեղադրում։ Պահակներ էին կանգնեցրել, որ չզան խանգարեն։ Նույնիսկ 3-4 փարեկան երեխաներն էլ մեր գյուղում գիտնին, որ չեն թողնում, արգելված է։ Մեր բոլորի ուղեղում նստած էր, որ դա հակասովներական արարք է։ Նկար ուղեցան զան քանդեն, մեր գյուղացիները չթողեցին։ Մի քանի անգամ ուրիկաններ են եկել քանդելու համար, բայց մեր գյուղացիները բահերով, եղաններով դեմ են դուրս եկել։ Նամարյա մի փասք փարի միշտ գիշերները պահակ էին կանգնում արձանի մոտ։ Նկար հանգաբացան, վարժվեցին կրկի»։*


Մեր գրուցակիցներից Նաիրի Թափաջյանը նույնպես պարմում է իր ազգականներից մեկի մասին. «Արշուն լինում ա իմ մորական կողմից, մամայիս հորքուրներից մեկի աղջիկը, ամուսնացած է եղել, նորահարս: Գաղթի ճանապարհներին փախցրել փարեյ էին: Ամուսինը ողջ էր մնացել: Տարիներ հետո էղ նույն ճանապարհով գնացել է կնոջը փնտրելու, բայց չհասավեց այդ մասին, ամուսինը երբեք չհասեց: Ըստ երևույթին կնոջը նա գրել էր, բայց չէր կարողացել բերել: Միշտ այդ խոսակցությունը մեր ընտանիքում եղել է: Լինում է, չէ՛, թրքացրել են, պահել են: Երևի զավակներ էլ ուներ, չհկամ»:

Աղջիկներին, նորահարսերին կորցնելուց այնքան էին վախենում, որ երբեմն, չնայած տղամարդիկ ավելի վրանգված էին, նրանց տղամարդու հազուստ էին հազցնում. «... Միայն մի հորեղբայրս է կարողացել փրկվել: Դրանից հետո պապիս որ սպանել են... Դիմա արդեն սկսվել է փախեփախը: Տարս չափից դուրս գեղեցկուհի է եղել: Նկարներն ունեմ, եթե կարող է՝ պեղքա, հետո կգրեն, բոլորը կփան (նկարները մենք հետո պարճենահանցիներ, իսկապես շատ գեղեցիկ երիտասարդ կին էր - Ն.Խ.): Փախեփախի ժամանակ, որպեսզի թուրքի ձեռք չընկնի, հազցրել են տղամարդու շորեր, երեսին մոր են քսել, հարուկ, շալվարով - քանով, էսպես մի կերպ փախցրել են դեպի Բաթում...» (Արեթր Մամիկոնյանի պարմածից):

«ՄՐԱՆՑ ԵՐԵՄՆ ԱԾԻՎԱԾ ՉԷ, ԻՍԿ ՍՈՒԼԹԱՆԻ ՆՐԱՄԱՆՆ Է ԱԾԻՎՈՂ ԵՐԵՄՆԵՐՈՎ ՏՂԱՆԵՐԻՆ ՄՊԱՆԵԼ» (Ավերիսա Քեշիշյանի պատմությունից)

Տղամարդկանց սպանելու պատմությունները մեր գրուցակիցների ամենացավոք հիշողություններից են: Բացի այն, որ ըստ էության բոլոր հիշողություններում առկա են ընտանիքի երիտասարդ փոքրագույնը և անհերանալու պատմությունները (պատմողները սովորաբար ասում են՝ «սպանել են», եթե նույնիսկ դրա ուղղակի ապացույցները չունեն), շարքերը պատմում են փոխանցվել: Արհիվ Շահինյանի պատմությունն այս կամ այն չափով ընդհանրական է. «Մորական տարիկա շատ էր սրտմտման, պատմում էր, որ 24 հոգի իրանց տեղից տղամարդ տարան սպանելու, բոլորին, իրա տղային, իրա ամուսնուն, իրա տեղորդ, տեղոր տղաներին, 24 տղամարդ: Մնացել էր մենակ թեղու, որ նրան աղջկա շորեր էին հագցրել, որպես աղջիկ, որպեսզի չտեսնեն սպանելու: Բայց, ասում ա, իրանք ստուգում էին, կատարածում էին, եթե աղջիկ երեխաներ են, սիրտ ստուգեցին, տեսալին, եթե տղա էր, ուրեմն սպանելու էին, որ հայերը վերջանան... Ուրեմն ստուգել են թեղու, տեսել են, որ տղայա, վերցրել են: Նանկարծ տարա նկատելի ա էր տանողների մեջ մի հար մարդ, տղա, որ իրա հոր տան ծառան ա եղել՝ Կեն անունով: «Կեն, - ասում ա, - իմ խաչատուրի տան աղ ու հացը աչքերդ բռնի, էդ մի տղեն ա մնացել, էդ մեկը թող»: Նկար տարում ա, որ տարել են, կատել են, իրան մեջտեղն են դրել, էդ Կենն ենեց ա տրել, որ մեջտեղը լինի մի ուրիշ ջահել երեխու հետ, և տղամարդիկ կատված, մեկը էն կողմից, մի թուրք շուն դրին էս կողմ, մի թուրք շուն դրին էն կողմ, սպանում են մեկ-մեկ: Որ սպանում են, պարանը կտրում են, սպանվածները ընկնում են ձորը: Գալիս հերթը հասնում ա էդ երեխաներին, էդ Կենն գալիս ասում ա. «Էս ջահել երեխան էլ թող էթան մեր Ալլահին ծառա լինեն, եկեք ներենք սրանց»: Որպեսզի մեր տղային էլ ներվեր, էն մյուս տղեն էլ հետն ա: Նրանց գեղին են դնում, գիշերով թողնում մեռելների մոտ, և գիշերով գալիս ա, Բագրատ, Բագրատ, ասում ա, վերջը գրում ա, տանում հանձնում ա տարիս, բայց ասում ա, 3 օր, հացը բռնած, մենակ դողում էր, զգում ա՝ ուրելու բան ա, բայց չի հասկանում՝ ոնց ուրի, էնքան որ վախեցել ա: Էդ էր տարիկա պատմում նշար-շար տեղն անան բաներ»:

Տղամարդկանց կոտորածի դեպք է նաև Արեգվազ Պողոսյանի պատմությունը, որը նա հիշում է իր մոր կենսագրությունից. «Մորս պատմածով մի օր տղամարդիկ գալիս են, ասում են՝ պետք է փախնենք անտառ, որովհետև թուրքերը հարձակվում են, բոլոր տղամարդկանց հավաքում են տանում... էդ 15 թվի բան էր, հա, 15... Բոլոր տղամարդիկ փախել են. իրանց հերթ, հորոխակեր, թեղիները փախել են էնտեղ: Մնացել են գյուղի կանանք ու երեխանք: Իրանց ընտանիքում էլ տարա է մնացել երկու աղջիկների հետ, որոնցից մեծն էլ իմ մայրն էր՝ վեց տարեկան: Երեխաներն ամեն Նախատան, իսկ տղամարդիկ էլ տրի միասնա ռուսների գործերին, օգնեն... Ասում ա՝ հավաքվել են, որ ժողով անեն, քառասուն հոգի էր տան մեջ լինում ա, քառասուն տղամարդ, մի քանի կին: Մրանք էլ օջախը վառել են, հաց են սարթում: Էդ տղաներ, տղամարդիկ կել են, որ ժողով անեն, էս կանանքն էլ հաց են պարտապարտ, որ դենն իրանց հետ, օջախը վառած ա: Մենք էլ, կան, երեխանքը ուրեմն տանք ընտանիք: Ասում ա՝ մենք էնքան ստիպած ենք, սպասում ենք էդ օջախի... Մեկ էլ, կան, շրջապատեցին, էկան թուրքերը: Նանկ՝ քանի շորերը: Շորեր չեն թողում, հանում են, որ տանեն իրենց էլի երեխ, ինչ... Նանում են շորերը, տկոտրացնում են, բոլորին գլուխներ կտրում են: Ասում ա՝ էս, հորոխապորս տղեն, բան, թեղու տղեն, մի քանի հոգի տեղն ընկնում ենք բանի տակ, դիակների տակ, իսկ իրեն մերն էդ քոռոց հետ՝ էդ երեխի հետ փախնում ա անտառ: Դրանք փրկվել են, ինքը մնացել է դիակների տակ: Կան սպանեցին, կոտորեցին էս քառասուն հոգուն ու գնացին: Նիմի կան էս դուրս էկա, արևոտ, բան, դուրս էկա էդ քանի, էդ դիակների տակից, տեսնեմ

էն մյուս երեխան էլ դուրս էկավ դիակների տակից, էն մյուսն էլ, մի հար էլ կնիկ էլի իրանց գյուղացի... Չորս-հինգ հոգի... չորս-հինգ հոգի... Երեխանք ու կանանք: Իրան թեղու տղեն ա էղել, ինքն ա էղել, երկու հար էլ երեխա են էղել, իսկ իրա մերն էր իրան քոռոց հետ անտառն է փախել... Նկար, ասում ա, բան էղավ... մի ինչքան ժամանակից էր էրան մերս, էր երեխի հետ էկավ, տեսնում ենք մի հար դիակն աղդեն ընկել էր էդ օջախի վրա, բան... Մորս հորն էլ էին մոտեցել: Բոլորին...»:

Նախի Թագիրյանը հիշում է իր անփոքար ազգակցական խումբը. «Նայրս Ամասիայից դուրս է եկել առաջին ջարդերի ժամանակ, 18 տարեկան է եղել, առաջին ջարդերին, ուրեմն, աս լինում է մոտավորապես, ինքը 1892 թ. է ծնվել, 18 տարեկան... Լավ, այդպես դուրս է եկել առաջին ջարդերին, 18 տարեկան է եղել... 15 թվի ջարդի ժամանակ առաջինը մեծ հորս են տարել, միշտ տարա կատեր, որ կացնաստարել են: Ամասիայի տղամարդիկ շատ քիչ են փրկվել, ընդհանրապես մնացել էին համարյա կանայք, և ինչքան տարիս հիշում եմ, ունեցել եմ հորաթույրներ և ուրիշ բարեկամներ, բոլորը կանայք են եղել, ևս համարյա տղամարդ չեմ տեսել ամասիացիներին»:

Ավերիսա Քեշիշյանի հիշողություններում իր հոր պատմությունն է: Նայրն ապրում էր Աղանայի և Մարաշի միջև, Ամանոսյան լեռներում ծվարած մի փոքրիկ գյուղում Լավաշում: Ինչպես առհասարակ այդ փարածքում, այնպես էլ Լավաշում հայ բնակչությունը հիմնականում թրքախոս էր և լավ հարաբերություններ ուներ հարևան թուրքերի հետ: 1895 թ. Աղանայից սկսած մինչև Մեծ եղեռնի ջարդերը մշտապես ներառել են նաև այս փարածքի գյուղերը, և Ավերիսա Քեշիշյանի պապն ու երեք պապերը այնտեղ գոհ են գնացել այդ ջարդերին: Ավերիսի հայրը պարանի հասակում հայաստանության դեպքերին դեմ առ դեմ առաջին անգամ բախվում է 1905 թ.: Նա հետագայում բազմիցս պարմել է իր որդիներին, այդ թվում մեր գրուցակից Ավերիսա Քեշիշյանին. «Իրենց հանում են գյուղից, թշում են Դեոթոյոյ: Տղամարդիկ, ով որ ողջ ա մնացել, փախնում են սարերը: Նայրս պատմում է՝ մեզ հավաքեցին, ևս, ասում է, տանմեկ-տաներկու տարեկան տղա էի, տարան մի մեծ բաց տարածություն: Ինչ-որ նստարաններ կային էնտեղ, կանայք, ասում է, նստեցին նստարաններին, իրենց փեշերը փեցեցին, լայն փեշերով շորեր էին հագնում, մեզ՝ տղաներին դեղին նստարանի տակ, փեշերով ծածկեցին: Փեշերով ծածկեցին, որպեսզի թարթեն: Մերթընդմեջ էրկու զինվոր էր մտնում գնալով, և հարցնում էին՝ էստեղ զենք բռնող և երեսը ածիլված տղաներ կա՞ն, որոնք կարող են զենք բռնել և կրակել: Մուրթանի հրամանն էր կրակել: Մուրթանի հրամանն էր կրակել սպանել: Գալիս են, փնտրում են ու վերջը գրնում են հորս ու կողքին մի ուրիշ տղայի: Երկուսին հանում են, քաշում են դեպի դուրս: Նայրս պատմում է, ասում է՝ եկանք դուսն մոտ, երկուսով ասում է ձեռքերը դուսն կողքի պարեպին դեմ փակեցինք ու դիմադրում ենք, չենք գնում: Նրանցանի կոթով, ասում է, խփում են մեզ... Նա, մոռացա ասել, որ մինչ այդ արդեն մի քանի հոգու բռնում դուրս են տանում, ու կրակոցները գալիս են, սպանում են էնտեղ: Ասում է կանայք բոլորը ճշում են, աղաղակում են... Գիտե՞ք, երբեմն կյանքում ինչ-որ աստիճանի հրաշքներ են պարտախում. ասում է՝ էդ պահին երրորդ մի զինվոր ներս մտավ, ասեց՝ «Էս ի՞նչ եք անում», ասում է՝ «տանում ենք սրանց սպանենք, սրանք կարող են զենք բռնել»: Ասում է՝ մեր երեսին նայեց, ասեց՝ սրանց երեսը ածիլված չէ, իսկ սուրթանի հրամանն է ածիլվող երեսներով տղաներին սպանել: ու ասում է՝ «թողեք էս երեխաներին, մի՛ սպանեք»: Սկսում են իրար հետ վիճել, բայց ասում է, փառք Աստուծ, էն երրորդ եկողն է հաղթում, ու մեզ, ասում է, հրանցանի կոթով մեջքներին խփեցին, մի հար էլ քացով խփեցին, ասեցին՝ գնացեք: Բարեբախտաբար հաջորդ օրը հրաման եկավ, թե թողեք մարդկանց... Նորից, ասում է, մենք վերադարձանք գյուղ, դրանից հետո, ասում է, մենք 15 թվին վերջնական արտոյի դուրս եկանք»:

«Մինչև ածիլվելը» և «արդեն ածիլված» սահմանագիծը, որ փոքրագույն չափահասության ինիցիացն շրջանն է արևելքում, խորապես արմատացել է հայերի գիտակցության մեջ, այնքան, որ երբ խոսվում էր պարանիների կամ մանկահասակ փոխանների սպանությունների մասին, համարյա միշտ ուղեկցվում էր «նույնիսկ ածիլվելու տարիքին չէր» արտահայտությամբ (ինչը նշանակում է՝ «նույնիսկ փոքրագույն չէր»):

Չնայած ընդհանրական հիշողությունները ներկայացնում են որոշակի ընդհանրությունների դեպքերը, բոլոր պատմողներն օգտագործում են «փղամարդկանց վերացնել» ընդհանրական արտահայտությունը՝ իրենց ընդհանրությունների դեպքերը կապելով ընդհանուր երևույթի հետ: Ակնհայտ է, որ կենսագրական հիշողությունը պահում է ոչ միայն մասնավոր կենսագրության փաստագրումը, այլև՝ կենսագրությունների կապը արեղի ունեցողի ընդհանրական ընկալումների հետ, ընդ որում՝ դեպքերի շրջանի հենց ժամանակագրական ընկալումները, ոչ թե ավելի ուշ ձևավորված կարծիքը, քանի որ անձերի վարքը թելադրվում էր ընդհանրական երևույթի ընկալմամբ: Օրինակ՝ պատմելով Արդվիհի մութ գրնվող Արդանուց գյուղաքաղաքում 1915 թ. սպանված իր պապի և հորեղբայրների մասին՝ Ալբերտ Մամիկոնյանն իր պապի մասին խոսելիս ներկայացնում է հենց ողջ երևույթը. «Այն ժամանակ դեռ երեխաներին չէին սպանում».

«Թուրքերը որ մտել են իրանց տուն, պապս (Մտեփան Ջամջյան էր անունը) թաքնվել է նկուղում: Տանն էին երեխաները, կանայք, բայց քանի որ էն փախար դեռ ձեռք չէին տալիս երեխաներին, թաքնվել է նկուղում: Թաքնվել է նկուղում, ձայն է լսել, իրենց կանանց աղմուկը: Ասել է՝ ես ինչի՞ նմ թաքնվում, փախկոտ մարդ չեմ, ավելի լավ է՝ ես մեռնեմ, քան թե մերոնց չկարողանամ պաշտպանել: Դուրս է եկել, հարձակվել է թուրքերի վրա, բայց նրանք շար էն եղել, փեղում գեղակահարել են: Դա եղել է 15 թվականին, պապաս էղել է երկու տարեկան, հորեղբայրս եղել է մեկ տարեկան» (Ալբերտ Մամիկոնյանի պատմությունից): Դժվար է սա անվանել սոցիալական հիշողություն, «փղամարդիկ փախչում էին», «փղամարդիկ թաքնվում էին», «փղաներին թաքցնում էին» հենց «դեպքերի» ընթացքում, և ընդհանրական հիշողությունը, փոխանցելով ընդհանրության հետ կապարվածը, միաժամանակ փոխանցում է ժամանակաշրջանի խնայությունն ու երևույթների ընթացքի փորձը՝ հենց նույն բառերով, ինչ բառերով ու դարձվածքներով դրանք գործածվել են:

ՋՈՒՐԸ, ԿՐԱԿԸ, ԱՆԱՊԱՏԸ

«Նրաման ա դուրս էկն, առաջի կոտորումը արեցին, տարան գեպը լցրին, հեպո վերևից՝ կառավարությունից բողոք սրացան, որ գեպերի ջուրը վարակվում ա դիակներից: Նեպո կանգնացրին, ասին գենը չփչացնելու համար վառենք, էս կլցնենք մարագներ կվառենք: Վառելուց էլի բողոք սրացան. հորը կլցվի, էդ մարդկային վառած հորը ահավոր է էղն, էս ահավոր հոր էր: Նոր փեսան, բշեցին Դեր Ջորի անապատներ, երրորդ կոտորածը արդեն էղել է Դեր Ջորի անապատներ, տարեր ին հեռու մարդկությունից, բնակչությունից հեռու, կոտորեր ին: Պապին անընդհատ էղի կսեր՝ իրեք փուլով է էղել» (Էլեոնորա Ղազարյանի պատմածից):

Կրակի, ջրի, անապատի գոեերի պատմությունները առկա են շարերի հիշողություններում: Ոմանք հիշում են իրենց ընդհանրական առանձին անդամների կամ ողջ բնակավայրի բնակչության վառվելը, ոմանք՝ խեղդվելը, դիակը ջուրը գցելու դեպքերը, շարերը՝ գաղթի ճանապարհի սարսափները:

«Մշո տարածքից դուրս եկածները Վարդևառ՝ չեն անում, Վարդևառի օրը համարարած ջարդ ա եղել, գյուղը մարդ չի մնացել... Պապս ասում էր՝ հավաքել են բոլորին, լցրել են մարագը, էդ իմ տարիկն էլ էր պատմում: Էդ վախար պապի Արամը 14 տարեկան ա եղել, ինքը Առաքելոց վանքում ուսանող ա եղել: Ասում ա՝ նենց շոգ եղանակ էր, մարագում շոգ, էդ Մակոյի մոր գրկում երեխա ա եղել, որը ծարավից լացել ա, ինքն էլ մի քիչ համարձակ կին ա եղել, թորթի գինվորին շար ա խնդրել, ասել ա՝ գոնե թող էս երեխուն մի քիչ ջուր տամ: Մարիամին թողել են երեխուն ջուր խմացնել, Մարիամը Ջորիկի հեպո դուրս ա եկել: Մարիամն ասել ա՝ մի հար էլ ոսկի կրամ, մեկն էլ գոնե գնա ջուր բերի: Իմ պապ Արամը, 14 տարեկան էր, ձեռքից սենց կրեի, որպես երեխա տղա, որ գնա ջուր բերի, Մարիամը գրկած Ջորիկին ու Արամին, ասում ա՝ սենց արտի մեջ էինք, խոտի մեջ էինք, որ ջուր տանենք, ասում ա՝ մարագը վառեցին: Ասում ա՝ ես լացելով ուզում էի վազնեմ ընդեղ, իմ ընտանիքը բոլորը մեջն էին, ասում ա՝ Մարիամը ինձ բռնեց, ասում ա՝ ասեց՝ «Արամ, մի գնա, քեզ էլ կվառեն»: Ասում ա՝ տենց էղ կինը, էրեխեն գրկին, ինձ բերեց, ասում ա, տենց էկանք ահագին, եկել հանդիպել են Թավրիզին՝ պապի հորթորի աղջկան, վերջը պապին ասել ա՝ բոլորին վառեցին: Թավրիզն ասել ա՝ ուրեմն իմ քեռու ընտանիքից մեկնակ դու ես մնացել, ասել ա՝ ուրեմն ուր որ ես, ընդեղ էլ՝ դու, գոնե քեռուս գերդաստանից մեկին փրկել: Էդ կինն էլ ճամփեքին իրա համար էկել ա, կարող ա փախել ձորն ա ընկել էղ կինը պարահարաբար: Թավրիզը լիքը երեխա ա ունեցել, Թավրիզի մի տղան էղ օրը նախիրի հետ ա եղել ու չի խմացել, սաղ ա մնացել, թե՛ չէ: Թավրիզի գրկում էլ եղել ա մեկնակ հորենը, կրծքի երեխա, Թավրիզն էլ տնից փախել ա, էրեխեն գրկած, Մարիամի հետ, իմ պապ Արամն էլ իրանց հետ, էկել են սկզբից ընդեղի գյուղերն են եղել: Պապին ասում ա՝ էկանք, գյուղերը լքված էին, փախել էին էլի, մտել են տան մեջ ապրել են, ասում ա՝ ուզում էինք ըսենց ապրուստ էլ ստեղծենք, տեսել են, որ չէ, հեպո էլ եկել են ըստեղ... Էդ գյուղից համարյա մարդ չի փրկվել, մի վեց ընտանիքից մի-մի մարդ» (Մուշեղ Գևորգյանի պատմությունից):

1 Վարդևառ, Վարդավառ, - հունիս-հուլիս ամիսներին նշվող հայկական տոն, որը նշվում է մեծ ուխտագնացություններով ու ջրախաղերով:



Մշո Բաղլու գյուղում այրվելուց փրկված Արամը նկարում ներքևից աջն է:

«Պապաս 11 թև 12 թվի ծնված ա, դա մորալորապես 18-20 թվականի եղելություն ա, ասեց՝ մամաս իմ ձեռքն էր բռնել, Նազարեթը՝ փոքր եղբայրը, գիրկն էր, ասում ա՝ մեզ լցրեցին եկեղեցին, վայնասուն ա: Ասում ա՝ էրեխա եմ, նայում եմ չորս կողմը, խատելված ա, դու մի սասա լցրել եմ, որ մեզ վառեն: Էդ ընթացքում, ասում ա, տարիկս խմբիս շար ճարպիկ կին ա Էղե, ըստեց որ գլուխը պրտացրել ա, տեսել ա գարդոն ա խախտ պարտուհանին, տարիկս պարտուհանից թռել ա, էրեխուն գրկել ա, իրանց ազգից մորալորապես 10-12 հոգի փախել են: Եկեղեցու պարտուհանից: Պապաս ասում ա, ես հիշում եմ, որ ասում ա՝ մթնշաղ էր, փախանք, սարեր բարձրացանք, ես չէի կարում, թաշ էր տալի մամաս՝ մեկը գիրկը, ես՝ ըստեց: Երբ որ ասում ա բարձրացանք սարը, տեսա, որ, ասում ա, եկեղեցին վառվում ա: Ես էլ էրեխա, ուրախացա՝ տես ինչ կրակ ա դուրս գալի, ասում ա՝ չգիրտի դա ինչ ա: Ութը-ինը տարեկան էրեխան ի՞նչ պրի իմանա, ու ասում ա՝ էդ բանը միշտ իմ հիշողության մեջ ա, հիշում եմ, ասում ա, ոնց էին խախտվում մտքնում եկեղեցին: Թորթերը, այո: Մարաշում ա Էղե դա, Մարաշի եղելություն ա» (Անահիտ Բարդակչյանի պարմությունից):

Գրիշ Բաղալյանն ու նրա քույր Նոանհարը, որ շար ծանր մանկություն են ունեցել, մինչև այսօր իրենց մոր՝ «աղեի» պարմությունը հիշելիս հուզվում են. «Իմ մերը սպրեց Վերին Սիփան: Մասիսի էն յանի... Մասիսի մորերքները: Պարեռազմը որ

սկսեց (նկարի ունի ջարդերը), տղամարդիկ գնում են դաղերքը (քարանձավները): Մեկնումները գալլում քանիսին գիշերը տաշար ա տանում: Մերս ասում ա՝ մորս ախպերը գալլում, որ հաց տանի, մամիկս հեյնում, շորերը խազնում, կայրում, շրջվոցը ընգնում: Գորս գալուց խփել են ախպորը: Արշավիր էր անունը: Մամիկս լայում, ասում ա՝ լսո, գնա, Արշոյիս խփին... Շորերը, կոշիկները ցրված: ... Մի ախպեր ա ունեցել աղես: Մերս ասում ա՝ ախպերս մահացավ, ախպորս կնիկը էրեխով էր: Նկանք գեղանք ման էկանք, խաց հավթիք ահագին, բերինք, վրը ուրինք: Տուն էկանք՝ մերս չկա: Մերս կորավել, չկա: Ասում ա՝ մերս շար խորտոր էր, ուրեմն թորթերը տարել են: Ախպոր կնիկն ասում ա՝ «Շուշո, մեր տնից խոր կիկյա»: Ասի՝ «այխարս, ես էլ թոխեր ման եմ կրալի, ի՞նչ իմանամ՝ որդե»: Թունդիքը բացինք, տեսանք մերս թունրամիջին, մամիկս թունրամիջին: Թորթերը տարել են ճխրել են թունդրի մեջը... Էն վախարերը քորդը մտնում իրանց գյուղ լրիվին սպանում ա, ինչքան տղամարդիկ կա՝ լրիվ փախնում են սարերը, չեն ըլնում: Աղես ասում ա Անդրանիկը ուղարկեց իրս Ֆիդայիներին, գնացեք գյուղաները պրտեր, սսեր՝ թորթը շարով կորտորում ա, որտե նեմեցը թորթին ուժ էր տալում, որ գյուղում սագար տա ու գենք: Իմացա՞ր: Ասում ա՝ էկան էրկու իրերհոգի Ֆիդայիներ մեզի գյուղի տղամարդկանց հավաքին, գարուն էր, սսին, «Ժողովուրդ ջան, Անդրանիկը մեզ ուղարկել ա, որ դոք դորս գար Վան: Վանում կիրկվեք»: Ասում ա՝ չհավաքացինք: Գարուն էր: Էկել են վար ու ցանք են անում դաշտը, ասում ա մեքանի օրից հետո դուս գյուլացողին կրեփ խախում են: Քրդերն են խփել: Աղեխ հորն էլ են խփել: Ղազար խոր անունն ա իլել, մոր անունը Մարոյա իլել: Ասում ա՝ իրեք չորսը գյուղի տղամարդկանցը հավաքին, մի հար հայ էր, մի հար թորթ էր, մի հար էլ նեմեց ա Էղե: Ասում ա՝ հավաքին, ըսեցին. «Ժողովուրդ ջան, մի փախեք, կոշիվ չկա, ձեզի բան ստող չկա»: Ասում ա՝ հավաքիլ ին գումը, որ ժողով ին անում, որ կոշիվ չկա, բարիչիք, սպրիք, վար ու ցանք արիք: Էդ ժամանակ, ուրեմն կրակը, ուրեմն չորս կրաղը բերում են լցնում են, նավթը լցնում են, պաժառ են տարում: Էդ սաղ ժողովուրդը էլ գումի մեջ ա: Աղես ասում ա՝ իրեք օր-չորս օր էր կանաչ կարմիր բոցը էրեխում էր: Գումի մեջը վատվել են: Էս ձևի թորթը էսօր մեր հայ ժողովրդին... ինքը էսօր... Նիսա էլ ուզում են թորթին պերեն, անեն մեզի ընգեր, մահմեդ ին, մուսուլման ին... Դե ասում ա՝ տղամարդկանցը վերացրին, մենք մնացինք, որոնք որ քորտիս խորտոր աղջիկներ ին՝ տանում ին իրանցը, որոնք որ, ասում ա, մեր պես մի քիչ ինվալիդ էղան՝, սսեց՝ մեր պեսներին չեն խախում: Մեր գլուխն ախոսա, որ խփին: Իրս քորն էլ ա մահացել էղտեղ: Նարգիզ էր անունը: Էրկու բոր են Էղե, մի ախպեր: Ու միակ մնացե աղես՝ Շուշուն: Բյասար իմ աղեի ընտանիքից մեկակ իմ մերն ա փրկվել: Նկար իրա տղի անունը Արշավիր դրավ, աղջկա անունը՝ Մարո: Իրս քորու ու մոր անունները: Տարիի անունն էլ վերցրինք, ախպոր անունն էր»:

Պյոզալ Նովհաննիսյանը ծնվել է երկրորդ գաղթի ճանապարհին. «Կիսորս ասում էր՝ բայս ջան, կայնի սսեմ, իմ կիսուրի կիսուրը, ուրեմն որ կգա կրենես, որ ինչ են էնում, կիսանեն էղ ինեղձ կնկան կրենեն, թունդիրն էլ նոր վառում էր, կրենեն կրցեն էղ վառման թունդրս մեջ, էղ կնիկը կվառի: Ասում ա՝ էսքան էսքան կորոր իրս փեշերից մնացել էղ թունդրս... վրեն: Իմ կիսուրիս աչքի առաջ: Իրան կեսուրին կվառեն: Կիսուրոս տերոր կնկան էլ էղենց էրամ, Զիմդի մորը: Էլի քցաց թունդիր վառած են: Իրան տան մեջը»:

Ելենա Արդահանյանի տարը իր երեք զավակների, այդ թվում Ելենայի մոր հեղ պերջին պահին փրկվել է երկվոմից. «Մայրս է պատմել իր մոր պատմությունը: Պապս արդեն չկար, նրա գլուխը կորել էին: Թորթերը Կարսում նրանց մի խմբի հեղ մտրդել են եկեղեցին, նավթ լցրել ն ահա-ահա պեղթ է լուցկին վառելին, հենց այդ պահին լուր է գալիս, որ այդ ցեղախորներին փոխանակում են թորթ ուղմագերիների հեղ: Տարս հարուստ ընտանիքից էր, նորը մեծացած, շար կրիտասարդ էր ու շար գեղեցիկ: Այդ եկեղեցու ողջ ժողովրդին, նրանց հեղ նաև տարիս իր երեք երեխաների հեղ բերում են Ախալքալաք: Որոշ ժամանակ մնում են Ախալքալաքում, մայրս երեխա էր, բայց շար լավ է հիշում:

1 Գրիշ Բաղալյանի մայրը մանկուց կաղ է եղել:

Ախալքալաքցիները նրանց լավ են ընդունել, շատ են օգնել: Ներքո փակում են Թրիլիսի: Ճանապարհին, մայրս պարմում է, մորենում էին ռուսական զինվորական կայազորերին և ուրելիք խնդրում: Մայրս վաղ մանկությունից հիշում է, որ այդպես համով բան էլ չի կերել: Ասում է՝ մեզ շատ մտով բորչ էին փախի: Մայրս լավ չի հիշում, թե իրենց մայրը, այսինքն՝ իմ փարն ուր էր անհետացել, բայց հիշում է, որ Թրիլիսիում մի անգամ եկել է իրենց մոր, կեռաս է բերել, խոսքացել է կրկին գալ: Ներքո իմացել են, որ իրենց մայրը մահացել է... (լաց է լինում...), թաղված է ընդհանուր գերեզմանատանում... (լաց է լինում): Այնքան երիտասարդ, գեղեցիկ... (լաց է լինում)... 28 փարեկան: Նարուսը ընտանիքից է դուրս, նորը պահված: Չի դիմացել»:

«Չգիտեմ՝ կեսուրս էր էրզրումից, թե՛ կեսարս, Ղարսից ու էրզրումից էին, որ մեկը որից էր՝ լավ չգիտեմ ես էդքանը: Ասում աս՝ փախելիս փախել պապաս, ասում աս, ինձի, Նարզիզին ու մեծ ախպորս առավ ու փախավ: Էրկու-իրեք օր առաջ մամայիս ողորկել էր, ասում աս, մամաս հողի էր, ողորկել աս, գեղն անցել են, փարել են իրա մորը՝ կեսարսիս մորը: Ասում աս, երբ որ մեկը էկանք հասանք գեղի բերանը, պապաս մեծ ախպորս փարավ, հեղ էկավ ինձ փարավ, ուզում էր հեղ դառնար, փեսավ թուրքերն են գալիս, էն աս չկարողացավ աղջկան վերցնել, Նարզիզը մնաց: Մենք որ, ասում աս, գեղի հոսանքը սենց ջրով գնում աս, մենք սպասում էինք, պապաս ասեց՝ հա՛յ, վա՛խ, ասեց, էրեխուն մորթել են, արյան շիթերը գալիս էր: Ասում աս, պապաս չոքեց, բայց էլ չկարողացավ, ասում աս, մի կերպ հեղանք ու վազեցինք: Երբ որ էկանք, հասանք ընդեղ, որտեղ որ պահ էր փվել իրա կնգան, ազափվելուց համ էրեխեն էր մահացել, համ մերս, ասում աս: Տենց էլ, ասում աս, հորս ձեռին մնացինք եթիմ, վերջն էլ որբանոց ընգանք, հերս էլ մահացավ» (Անահիթ Բարդակցյանի պարմությունից):

«Իմ մորական... մորս մայրիկը... որ գաղթը սկսվում աս, էդ մամայիս մորը, Ռեհան էր անունը, միշտ ասում էր, որ երբ եկանք էդ գեղն անցանք, իրա 14 փարեկան բրոջը բրոջերը խլեցին, էլ ես չիմացա՝ թցին գեղը, թե՛ փարան: Միշտ էլ ասում էր» (Անահիթ Նովսեփյանի պարմությունից):

Մեր պարմողներից շարերն են հիշարական Մուրադ գեղը, որում մի կողմից խեղդել են մարդկանց, մյուս կողմից՝ ջուրն է իր ալիքների մեջ կլանել հարկապես երեխաներին (այդ մասին մանրամասներ կան Ալմասր Նարությունյանի պարմությունում):

Նիշողություններում շար կյոթ կա գաղթի ճանապարհին եղած մարդկային գոհերի, ճանապարհին թողնված երեխաների, փախուստների, կողոպուտների մասին, բայց այդ ճանապարհի ամփոփ նկարագիրը շար հանգիստ, առանց հուզվելու, համարյա անարբեր փվեց Անահիթ Բարդակցյանը. «... Ես լսել եմ պապայիս քեռու կնգա բերանից՝ Նայկանուշի, ասեց՝ էն վիճակն էր, որ մենք մեռելիների վրայից գնում էինք մթության մեջ, զգում էինք, վայ սիրտդ չհատնի, որդերը մեր վրա են բարձրանում, ասում աս, այ սենց էինք անում, սենց (ցույց է փախիս, թե ինչպիսի զգուշությամբ էին ուրբը դնելու փնտրում), ու քայլում էինք: Վրաներիցս մարբում էինք ու քայլում էինք էլ որդերի միջից»:

Գաղթի ճանապարհի դաժանագույն հիշողություններից են նաև հոգեկան փառապանքների մասին պարմությունները: Վասակ Թորոյանը պարմում է փաղկոսիցի մի կնոջ պարմություն, որի ուտերին մնացել էր երկու փղա՝ որդին ու եղբայրը. «Երկու երեխային չի կարողանում բերել, սրիսկված մեկին պեղք է թողնի: Մեկը եղբայրն է, մյուսը՝ որդին: Եղբայրը իրենց փան միակ կենդանի մնացած փղան է, եթե նա չլինի, ուրեմն իրենց փան ծախը կմարի... Չգիտեմ՝ ինչքան այդ կինը փանջվում է, բայց վերջում որոշում է ընդունում, որդուն թողնում է... Եղբայրը եկավ, հիմա փղաներ ունի, ժառանգներ... Ես փախել եմ ասում, այդ կինն այդ ձևի ընտրություն է անում: Նիմա Շղարշիկ գյուղում են ապրում, մեր գյուղում»:

ՋԱՐԴ, ԿՈՏՈՐԱԾ, ՓԱԽԵՓԱԽ, ԳԱՂԹ, ԱՔՍՈՐ, ԵՂԵՌՆ, ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր գրույցների ընթացքում գրուցակիցներն իրենց ծնողների, պապերի հեղ փնտլի ունեցածի մասին նկարագրական բնույթի հիշողությունները պարմելիս սովորաբար գործածում էին «կոտորած», «ջարդ», «ջարդեր», «փախելիս», «գաղթ», «գաղթականներ» բառերը, խիստ հազվադեպ՝ «սքսոր» բառը, որոշակի իրավիճակ նկարագրելիս՝ «մորթել են», երբեմն նաև՝ «սպանել են», «փառել են», «ժպցնահարել են» բառերը: «Կոտորածի ժամանակ Արշակի ընտանիքը կոտորվել աս, Բաղյունում մեծ ջարդեր աս եղել» (Մուշեղ Գևորգյան, Դաշրաղեմ): «Էսս կոտորում որ ընկավ, թուրքը փարավ իրա մեծ աղջկան ու փղան, շար սիրուն ին էղե, էղ փարուս հորողորդ կինը շար սիրուն կին աս էղե ինքը, իսկ մի փղան ու աղջկան հենց իրա դեմ մորթել են, իրա աջքի առաջ մորթել են իրա էրեխեթին» (Էլեոնորա Ղազարյան, Աջնակ): «...Իմ փարին պարմում էր, որ քառասուն հոգի մի փան մեջ ապրել են, քառասունից ինքը մենակ, հարս աս էղե Մջգեղում, որ ազափվել աս, իրա հոր գերդասարանը լրիվ փառել են, կոտորել են» (Վազգեն Ղուկասյան, Աջնակ): «Ծնողներս եղել են Թորքիայից գաղթած հայեր, այսպես ասեմ, հայրս եղել է Գոնարական Ամասիայից, իսկ մայրս եղել է Կեսարիայի հենց կենտրոնից՝ Կեսարիա քաղաքից: ...Նայրս Ամասիայից դուրս է եկել առաջին ջարդերի ժամանակ... Լավ, այդպես դուրս է եկել (առաջին ջարդերին...)» (Նաիրի Թափոյան, Երևան): «15 թվի ջարդի ժամանակ առաջինը մեծ հորս են փարել, միշտ փարս կասեր, որ կացնահարել են» (Նաիրի Թափոյան, Երևան): «Այ էղ ձևի փախելիս աս էղել, ջարդոց, ջարդոց...»: «Էրմասար մորթուրը փախելիս աս գնացել»: «Վերջը որ էղ փարել փնտլել արդեն կոտորած կոտորածին անցավ...»: «Փախելիս փախել ժամանակ աս էղել, հա, ճանապարհին»: «Երանք մերունց մորթել են, բայց մերունք չեն մորթել, որպես թշնամի ենք կռվել, դուք կռվել եք, ես էլ պրի կռվեմ» (Անահիթ Բարդակցյան, Երևան): «...Պապիս որ սպանել են... հիմա արդեն սկսվել ափախելիս... Փախելիս փախել ժամանակ փարս չափից դուրս գեղեցկուտի աս էղել...» (Ալբերտ Մամիկոնյան, Երևան): «...Առաջի կոտորումը արեցին..., երրորդ կոտորումը արդեն էղել է Դեր Ջորի անապարներ, փարել ին հեռու մարդկությունից, բնակչությունից հեռու, կոտորել ին» (Էլեոնորա Ղազարյան, Աջնակ): «Մինչն էս ջարդերը, մինչն 15 թվի ջարդերը... Նա, փախելիս փախել ժամանակ էլ Աղավնիկի հեղ աս եկել: Աղավնիկը չգիտեմ ինչ բարեկամ աս էղել մերունց: Աղավնիկի հեղ գալուց, էղ փախելիս փախել ժամանակ...» (Վարդան Նակոբյանի պարմածից, Նորակերպ): «...Ներգաղթի ժամանակ եկել աս Նայասարան» (Արարակ Նովսեփյանի պարմածից, Նորակերպ) և այլն:

Երբեմն գործածվում է նաև «կռիվ», «պարերսզմ» բառերը («պարերսզմից են մեռել, ինչից են մեռել, թուրքը կռվել է, իրանք էլ կռվի ժամանակ փախել են, ճանապարհին մեռել են... (լրացուցիչ հարցին, թե ինչ պարերսզմի մասին է խոսքը, պարմողը հարցից փարակուսած ասաց՝ «հայի-թուրքի կռվին, բա պարերսզմ է եղել հայի թուրքի մեջ, դուք չգիտե՞ք» (Թամար Պողոսյանի պարմածից):

«Կոտորած», «ջարդ», «ջարդեր», «փախելիս», «գաղթ», «գաղթականներ», «մորթել են», «սպանել են», «վառել են», «կացնահարել են» բառերը, ամենայն հավանականությամբ, օգտագործել են դեպքերի մասնակիցներն իրենց զավակներին կամ միմյանց պարմելիս:

Փրկվածների բառամթերքում «մորթել» բառը, հավանաբար, թուրքերեն «kesmek» բառի թարգմանությունն է: Նայերենում մարդ սպանելու համար «մորթել» բառը կա՛մ չի գործածվում, կա՛մ գործածվում է բացառապես ցեղասպանության շրջանի դեպքերի

նկարագրության առնչությամբ, ընդ որում, այս բառն արդեն, հավանաբար, մտնել էր նաև նրեխաների բառամթերք: Անահիպ Բարդակջյանն իր հոր հիշողություններից պարմում է. «Պապաս ասում աս՝ դաշտերով գնում էինք, պրի սենց սարի նման տեղ կա, բարձրակայինը: Ասում աս՝ Նեյինն անունով մորաբորոջս աղջիկը կար: Էլ մասար էր անունը մորաբորոջս, ևս նկարը տեսել եմ, փոքր աղջիկ էի, էլ նկարը մինչև հիմա իմ սեփի առաջ աս՝ կասույր սեփերով էր: Պապայիս ազգի մեջ կասույր սեփերով էլ կա, մագերը դեղին՝ մինչև սպեղ (ցույց է փախի մինչև գուրկարեղ): Պապաս, էլ Նեյիննի թեղ մտած, բռնած, էրկու քրոջ էրեխեք, բարձրանում էինք, ասում աս՝ հագին սպիտակ գեղեցիկ փոփոռիկներով շոր աս: Ասում աս, մեկ էլ ասում աս Նեյիննն ասենց՝ վայ, Նարություն, թուրքերը գալիս են: Ասում աս՝ ևս Նեյիննայի ձեռքից բռնեցի, քաշելով փարս, փարս, Նեյիննան ձեռքիցս սրկվեց, գրդորվեց, ասում աս, ևս փախա: Փախա, ասում աս, կանգնել եմ ծառերի արանքով ըսնեց խոտերի մեջ նայում եմ: Ասում աս վախից Նեյիննայի լեզուն փաթ ընգավ, ասում աս՝ ասենց՝ **«մի մորթեք ինձի, մի մորթեք»:** Բայց ասում աս՝ արդեն քցին դանակը, և ևս փախա, ասում աս, որ էլ մենացածը չտեսնեմ, պապաս, էլ չտեսնեմ, ասում աս»:

Պարմությունների ընթացքում հաճախ հնչող «եղեռն», «ցեղասպանություն» բառերի գործածության ձևն ակնհայտորեն վկայում է դրանց ուշ շրջանի հավելում լինելը: «Նայրս ծնվել է 17 թվականին, մայրս՝ 20 թվականին, նրանց ընտանիքն էր **եղեռնից հետո Նունասարան են գնացել...**» (Աիդա Թովուզյան): Այսօր, սակայն, «ջարդեր», «փախնեփախ», «կոտորած», «գաղթել» և «եղեռն» բառերը երբեմն զուգահեռ են գործածվում կամ նույնիսկ կրկնվում են նույն նախադասության մեջ. «**Թուրքերը... հայերին ջարդում էին, չէին ուզում հայերը սպրեն, էն եղեռնը որ եղել է, ինչ արել են՝ թուրքերն են արել»** (Թամարա Պողոսյան): Գյումրեցի Սիլվան Ղարսից գաղթած իր հարազատների մասին խոսելիս ասում է. «**Գաղթվել են Ղարսից, էկել են Ղուկասյան..., 15 թվից, եղեռնից**»:

Երբեմն, որոշ պարմություններում, զգացվում են «աքսոր» և «ցեղասպանություն» բառերի փոքրերակված ընկալումներ. «... Դարդանելում շատ **ցեղասպանություն** չեղավ, որովհետև մեծ քաղաք էր, գյուղերում եղավ **ցեղասպանությունը**, Դարդանելից **կաքսորներն...** չուրը, անասպարները...» (Նայրապետ Յագրջյանի պարմությունից): Այնպես է, որ պարմողը «ցեղասպանություն» բառը գործածում է «կոտորած», «սպանություն» բառերին համարժեք: Ուշագրավ է նաև, որ «աքսոր» բառը մեր գրուցակիցներից գործածում են միայն երկուսը՝ Ավետիս Բեշիշյանը և Նայրապետ Յագրջյանը, երկուսն էլ՝ թրքախոս հայերի ընտանիքներից: Նայերենը մանկության փորձերին չեն իմացել, հեքազայում են սովորել, և նրանց մանկական հիշողությունները, ըստ երևույթին, պահել են թուրքերեն պաշտոնական «shrght» բառը, և այժմ գործածում են այդ բառի հայերեն գրական համարժեքը՝ «աքսոր»: Եղեռնի վերաբերյալ հայերեն «աքսոր» բնութագրիչը մեր պարմողներից ուրիշ ոչ որի խոսքում չի հանդիպում:

«ՆՐԱՆՔ ՄԵԶՆԻՑ ՊԱԿԱՍ ՉԵՆ ԿՈՐՅՐԵԼ, ԻՆՉ ՃԻՇՏՆ Ա՝ ՃԻՇՏՆ Ա»

«Ես թուրքական ֆիրմեր շատ եմ նայել... Երևի մի 150-200 հատ... իրանց թուրքական կինոները իրանց իսկական կյանքն աս ցույց փախա: Նրանք էլ են շատ փուժել, գիտե՛ս ինչեր են քաշել նրանք՝ սով, ջարդ, ջարդերի հետ մեկտեղ նրանք էլ են կորցրել, նրանք մեզինից պակաս չեն կորցրել, ինչ ճիշտն աս, ճիշտ աս» (Անահիպ Բարդակջյանի պարմությունից): Թուրքերի մասին թուրքական ֆիրմերից ձևավորված այս ընդհանրական ընկալումը գործնականում միակն է, որ մեր 35 գրույցներում հնչել է: Մեր պարմողներից նրանք, որոնց «թուրքական պարկերացումները» սնվում են նրանց ընտանիքների «թուրքական փորձից», որն է որոշակի կամ ընդհանրական պարկերացում չունեն Թուրքիայի կամ թուրքերի՝ հայերի ճակատագրի հետ չառնչվող կյանքի մասին: Նրանք, միաժամանակ, կա՛մ չգիտեն, կա՛մ չեն պարմում, կա՛մ իրենց ընտանեկան կենսագրություններում չունեն հայերի կողմից (կամ իրենց ընտանիքի անդամների կողմից) թուրքի կամ թուրքերի հանդեպ արված որևէ դաժնապարտելի քայլի հիշողություն: Նայի/հայերի անընդունելի քայլի միակ հիշողությունն առկա է միայն Ալմասր Նարությունյանի պարմությունում և վերաբերում է քրդերին: Նա հիշում է իր հոր պարմությունն այն մասին, որ հայերի մի խումբ Մուշ հասցրած երկու քրդերից մեկին նույն փրկվածներն են սպանել, իսկ մյուսին սպանվելուց ազատել է իրենց գյուղի քահանան. «**Դե քա հայերի մեջ էլ վատ կա**», - եզրակացնում է պարմողը: Նույն Ալմասր Նարությունյանը պարմում է, որ հեքազայում հայերի հետ միասին Նայասարանում հասարակված մի քուրդ հիվանդ էր, ինքը գնացել է իր բժիշկ եղբորը խնդրելու, որ գա հիվանդին քննի, բայց եղբայրը հրաժարվել է՝ ասելով, որ քրդերն այնքան հայ են սպանել, որ ինքը չի պարրաստվում քրդին բուժել. «**Որիմ աղբերն է՝ չասե՛նք**»:

Նայերի կողմից դիմադրելու կամ վրեժ լուծելու մասին հիշարկությունները քիչ, բայց առկա են մեր գրուցակիցների պարմություններում: Դրանք ոչ այնքան իրենց ընտանիքների կենսագրությունից հիշողություններ են, որքան Վանի ինքնապաշտպանության, հայոց ինքնապաշտպանական խմբերի առաջնորդների անունների կամ նույնիսկ միայն Անդրանիկ անվան հիշարկումներ: Այն քիչը, որ առկա է մեր գրուցակիցների ընտանեկան պարմությունների հիշողություններում, մեծ մասամբ դարձյալ հանգում է Անդրանիկ կամավորական ջոկատների հետ առնչակցությանը, ինչպես, օրինակ, Գարեգին Չուգասյանի պապի դեպքն է, ով, ԱՄՆ-ից վերադառնալով և իմանալով իր ընտանիքի վախճանը, միանում է Անդրանիկ ջոկատներին: Արեգնազ Պողոսյանը, որի մայրը փրկվելուց հետո Նայասարանում ամուսնացել է մեկ այլ փրկվածի հետ, որն է որոշակի դեպք չիմանալով, գիտի սակայն, որ իր հայրը Անդրանիկի հետ կովել է. «**Իշխանաձորցի ախրը: Ինքը Էկելյա Լապեղ որպես Անդրանիկի զինվոր, զինվոր աս գրված էղել... ինքը ձի աս ունեցել, սպիտակ ձի: Կուս երիտասարդ էինք, էլ էլ աս պարմել ինքը, Անդրանիկի հետ միասին կովել էին... Իրանք վայնենի էին, իրանք էլ Անդրանիկի հետ էլ ժողովրդին էին հավաքում բերում**» (նկարի ուներ, որ լեռներում և քրդական գյուղերում թաքնված հայ բնակչությանն էին հավաքում և օգնում փրկելու Նայասարան): «**Իմ հորեղբայրներս Ուջանի են 20-25 անձինք են, ովքեր 1915 թ. փախել են, Անդրանիկ գործարարի հետ կովելով եկել հասել են Ուջան: Իմ նրեք հորեղբայրները: Իրենք Սասնա Ծաման գյուղից են**» (Ուջան գյուղի գյուղապետ Առաքել): Ալմասր Նարությունյանի հայրը նույնպես Անդրանիկի խմբի անդամ է եղել:

Երբեմն, սակայն, հիշվում են նաև որոշակի դեպքեր. «... Մորական պապիկս ու իրս ընկերը, մամաս անունն էլ հիշում էր՝ Նակոբ էր ասում աս անունը... Նակոբի հետ որոշում են, որ թուրքի զինվոր գրվեն, թուրքի զինվոր են գրվում, բայց ինչքան հեքազայուր աս, թուրքերին սպանում են, սարկացնում են թուրքերին, ասում աս... Թուրք ղեկավարները

նկարում են, ասում են՝ Էն Էրկուսը թուրքերի են խտում, հայ են, հասեր: Պասիկա ու Էդ տղեն՝ Նակոբը, վագում են դեպի սարը, բարձրանում ու հեղ են իջնում փախչում են: Ըսկ պապայիս հայրը, խուճը են կազմած եղել, ինքնուս, սարերն են գնացել, թուրքերի հախից շար են եկել...: Էն սարիճանի, որ հեղապեղել են օրերով, գրել են իրան, գլուխը կորնել են...» (Անահիտ Բարդակչյանի պարմությունից):

«18 թվին ֆրանսիացիները գործ իջացրին դեպի Կիլիկիա, և այդ ֆրանսիական բանակի մեջ սրեղծեցին հայկական լեզուն, և հայ կամավոր տղաները գնացին Կիլիկիա կռվելու... Դրանցից մեկն էլ իմ հայրս է, Կահիրեում թողնում է խանութը, ամեն ինչը, գնում է Կիլիկիայում կռվելու: Նկարներ էլ ունի, Տարսուս է գրած, հիմիկվա Տարսունն է... Այդ կողմերում գնում է և մինչ 18-ի, 19-ի վերջին ֆրանսացիները սրիպված հանձնեցին Կիլիկիան, և այդ կամավորները հեղ վերադարձան» (Նաիրի Թաթևյանի պարմությունից):

Մեր զրուցակիցների հիշողություններում ամուր ստիպում են ոչ միայն, և նույնիսկ ոչ այնքան իրենց ընթանիքների գոհերը, որքան՝ այն դաժանությունը, որին զոհ գնացին մարդիկ: Եվ երբ հիշողությունները խաչվում են հայերի պարասխան քայլերին, սովորաբար համեմատվում են դրանց դաժանության աստիճանները. «... իրանց արած վատությունը իրանց անխղճությունն ա էղել, նրանք մերունց մորթել են, բայց մերունք չեն մորթել, որպես թշնամի են կռվել, դոք կռվել եք, ես էլ պրի կռվեմ, չէ՞» (Անահիտ Բարդակչյանի պարմությունից): Սրա հեղանթով մեր զրուցակիցներից շարերը թուրքին/թուրքերին առհասարակ համարում են դաժան ու դաժանության ընդունակ: Ուշագրավ է, որ փրկվածների հեղազա կյանքի ողբերգությունները, սովը, դեզերումները, որբանոցային մանկությունը, գաղթականական կյանքի բոլոր դժվարությունները, անձանոթ երկրներում հարմարվելու խնդիրները, աշխարհք ու մի կտոր հաց գրեելու փնտրությունը, միայնակ ծերությունը, կործանված ծրագրերը, ընդհարված կարիերան, խորհրդային շրջանի բռնադատումները և այլն, որոնք հեղազայում փրկված ժամանակ դարձան փրկվածների կյանքի հիմնական ընթացքը, մեր զրուցակիցների կենսագրական հիշողությունում ուղղակի ձևով չեն կապվում թուրքական հիշողության հեղ: Փրկվածների «թուրքական հիշողությունը» սևեղված է գլխավորապես եղեռնի շրջանին, և փրկվածների միջոցով «թուրքի» այս ընկալումը զգալիորեն ընդհանրական է Նայաստանում: Ինչ զգացմունքներ է առաջացնում «թուրք» բառը. «սարկություն» (Վարդ Արաջյան, Էլեոնորա Ղազարյան), «սարկություն, վրեժ» (Մուշեղ Գևորգյան), «դաժան են, դաժան» (Գյոզալ Ղովհաննիսյան, Արփիկ Շահինյան), «թշնամություն» (համարյա բոլորը): «Դուք ձեր կյանքում թուրք տեսած կա՞ք» հարցի պարասխանը գործնականում բացասական է, բայց նրբեմն ուղեկցվում է մեկնաբանությամբ, ինչպես. «Չէ, Աստված չանի, որ տեսնեմ, ընթան է թուրքի ոխ լցվե մըր հորս մեջ» (Էլեոնորա Ղազարյան): Ներազուրության ընթացքում Թուրքիայի և թուրքերի հեղ հարաբերություններ ունեցող կանանցից երկուսը թուրքերի հեղ իրենց հարաբերություններից դրական զգացմունքներ ունեն, սակայն, ինչպես նրանցից մեկն ամփոփեց. «Ես Թուրքիա հենց հիմա գնում-գալիս եմ, ես, միշտ էլ, թշնամանք չեմ տեսել, բայց յուրաքանչյուր քայլս փոխիդ կմտածես, որ թշամող հողի մեջ ես» (Գյումրեցի կին): Թուրքիայի և թուրքերի նկարմամբ Նայաստանում «կուրակված» սոցիալական հիշողությունը գերիշխում է ներկայիս սոցիալական փորձին:

«ԴԵ ՆՐԱՆՔ ԷԼ ՄԱՐԴ ԵՆ»

Նույնիսկ ամենածանր հիշողություններ ունեցող ընթանիքներում միշտ սիրով հիշվել և փոխանցվել են օգնության դեպքերը¹, եթե նույնիսկ օգնությունն իրենց ընթանիքների անդամները չեն ստացել և դրանց մասին իրենք տեղեկացվել են միջնորդավորված: Այդպիսին է, օրինակ, Անահիտ Բարդակչյանի հեղնյալ պարմությունը. «...Տուրիստ էի գնացել... Էնդեղ մի հասր կնոջ հեղ ծանոթացա, անունը Գեղուհի էր, հայերեն էր խոսում, թարս ու շիրակ, մարդը (ամուսինը-Ն.Խ.) սկի չգիրեր հայերեն: Թուրքիայից էին Էկել, Ստամբուլից էր, թե որտեղից: Ինքը պարմում ա, ասում ա «փախե՛լիս Ժամանակ կեսրարս փոքր էրեխա ա լինում, փախե՛լիս արտում ա մեում, թուրքը անցնելուց ասում ա՝ վա՛յ, Էսի մեր հարևան չգիրեմ ինչի տղեն ա, փախել են, էրեխեն մնացել ա, չեն հասցրե փանեն... Առնում, բերում ա, պահում ա էդ թուրքը էդ տղուն, պահում, մեծացնում ա: Էդ թուրքի փախելն ասում ա՝ լսի, մեր ձեռքի փակ մեծացավ էս տղեն, շար էլ թե հայի, գյալուրի էրեխա ա, բեր, ասում ա, աղջկա ամուսնացնենք, մեկ ա՝ մեր իմացած տղեն ա: Ասում ա՝ չէ, ես որ էս էրեխուն քթա արտի մեջ, առի Էսի ես պրի փանեմ, որպես հայ պահեմ, մեծացնեմ, հայի հեղ ամուսնացնեմ... Վերջը ինենց ա անում, հայ աղջկա հեղ ամուսնացնում ա, ու նստում, պարմում ա, ասում ա, հայ հեղիսք, ըսենց, ըսենց, էս էրեխին, որ ես քթա արտի մեջը կիսարսն, լացած, ինդճ ու կրակ, սոված, ծարավ դողում էր, սիրտս մղկրաց, առի՛ ես սրան պրի պահեմ և հայի հեղ պրի ամուսնացնեմ»: Ասում ա ամուսնացրե՛լ ա հայի հեղ և ինքը՝ Գեղուհին, էդ տղու տղու հեղ էր ամուսնացել, էդ տղեն իրա կեսրարն էր»:

Մեր զրուցակիցների պարմություններում օգնության դեպքերը սովորաբար զուգակցվում են փրկության դեպքերի հիշողություններով: Արդեն ասվեց, որ օգնության հիշողություններն զգալիորեն անհարականացված են, հաճախ հիշվում են որոշակի մարդիկ: Այդ հիշողությունները սովորաբար ավարտվում են ընդհանրական գնահատականով. «Դե նրանք էլ են մարդ»:

Ավերիս Բեշիշյանն իր հոր պարմածներից հիշում է, թե ինչպես է իր հորն ու հորեղբայրներին օգնել իրենց դստրը. «Խաղաղ մարդկանց՝ թուրք ոչ զինվորների մասին, իմ ձեռողները ուրիշ բաներ էլ են պարմել՝ ավելի մարդկային, ավելի մարդասիրական և ավելի բարեկամական ու մարմնիկ: Նույնիսկ առիթներ են եղել, երբ մերունք՝ չորս կողբայրներով, մի անգամ փախել են սարերը, ուրեղբայրս նենալու պարճատով, քանի դեռ վրանգր կար՝ չէին կարող գյուղ գալ: Գիշերները մեկ-մեկ գալիս էին, որ չուր փանեին, կամ ուրեղբայր փանեին: Մի անգամ, ուրեմն, իրանց դուրի փունը, դուստր թուրքերեն նշանակում է բարեկամ... Ուրեմն մեր Լափաշ գյուղի ծայրում մի թուրք է ապրել, որը եղել է մերունց դուստր... Պարմում եմ 1895 թվի մասին, ըստ հորս պարմածի... Այնպես է պարսիսում, որ երբ մերունք այդ թուրքի փանեն են, զինվորները գալիս են, երեք հոգի, ու մարում են էդ մարդու փունը: Իրենք իմանում են: ...Մերունց առաջարկում է անմիջապես մտնել ամբարները, այնտեղ թարմվում են... Թարմվում են այնտեղ, գալիս են մարդու

¹ Այս աշխարհում ամբողջովին շրջանցված են ռուսների, ելլողացիների ու ամերիկացիների կողմից ցուցաբերված օգնության դեպքերը, քանի որ դրանք, նախ, համակարգված էին, անհարկերի ու ընթանիքների կենսագրություններում և, քնականաբար, հիշողություններում մնացել են գլխավորապես որբանոցային անցյալից, երկրորդ՝ կապ չունեն կամ գոնե պարմողների կողմից չեն կապվում հայերի «թուրքական հիշողության» հեղ:

տունը, ասում են՝ «դու էստեղ գյալուրների ես պահում»: Ասում է՝ «ոչ, ես գյալուր չեմ պահում»: Պապերիցս մեկը-երկուսը ծխող են լինում ու այդտեղ եղած ժամանակ ծխում են: Ասում է՝ «դու սուր ես խոսում, դու չես ծխում, բայց քո տանը ծխախոտի հոտը կա»: Ասում է՝ «այո, իմ եղբայրս հարևան գյուղից ինձ այցելել էր, ինքը շար լավ ծխող է և անդադար ծխում է»: Այսպես այդ մարդը պահպանում է իրենց, բայց հետո ասում է՝ դուստր, խնդրում եմ արդեն երկրորդ անգամ մի եկեք, որովհետև մարդը սկսում է վախենալ, բայց այդ դեպքում, այդ ձևով իմ պապերին մեկ անգամ ազատում են»:

Մեր գրուցակիցների ընդհանրական կենսագրություններում հարկապես Մասունի, Մուշի, Բիթլիսի փարածքում շար ավելի հաճախ են հանդիպում քրդերի օգնության հիշողությունները՝ թե՛ կոնկրետ ընդհանրների, թե՛ ամբողջ բնակավայրերի հետ կապված: Արեգնազ Պողոսյանն, օրինակ, պարմում է. «Մայրս իրա բողոք ու մոր հետ գնացել են քուրդ քիւլալի տուն, սկզբում սա չի համաձայնել օգնել, սակ է՝ կգան ձեզ էլ, ինձ էլ կսպանեն, բայց հետո սակ է՝ լավ, մնացեք, ոչխարների մեջ ձեզ կպահեն... Քրդի շոր են հագցրել... Գիշերը ոչխարների մեջ կարում էին, ցերեկը գնում էին ոչխար արածացնելու... Չգիտեմ ինչքան ժամանակ են այդտեղ մնացել... Էդ քուրդն էնքան լավ մարդ ա եղել...»: Այնպես Վարությունյանի պարմության շար դրվագներ նույնպես վերաբերում են քրդերի օգնության դեպքերին: Օգնության անհարակալ դրվագներից զար, ըստ մեր պարմողների հիշողությունների, քրդերն օգնել են ամբողջ բնակավայրերի հայ բնակչությանը. «Պապաս միշտ պարմում էր՝ Մանազկերտից ոչ մեկ չի կորուրվե, իրանց քաղաքի ղեկավարը քուրդ է եղե, չորս հարյուր զինվոր ա ունեցե, երբ որ արդեն ամբողջ Մասունով մեկ տարածվել են էղ կորուրածները, փախելփախ, էս քուրդը գիշերով հավաքե ամբողջ հայերին՝ Մանազկերտի հայերին, բոլորին հավաքե, իրանց ունեցվածքով նույնիսկ (շեշտադրում է) բարձել՝ սայլեր, միջև Խոյի կամուրջ բերե-անցացրել ա» (Վարդ Աբաջյանի պարմությունից): «Տարս Խուրթ Դաշտաղեն գյուղից ա, մեծ գյուղ չի եղել, մի 30-40 տան չափ են եղել ու իրանց հարաբերությունները քրդերի հետ լավ են եղել, գաղտնի մեկն էլել ա հասկացրել ա, թե Մկրտ, կարաս ընդհանրի փրկի, թե որոշել են հայերին կորուրեն... Ու սակ են ոչ մեկի չասեք: Դե Ջոզոն ասում էր՝ մեր ընդհանրից ոչ մեկը չի կորուրվել, ոչ մեկին վնաս չի եղել, ասում էր՝ բոլորը փրկված եկել են, բայց ապրուստն են թողել, ոխակ չեն արել դառնան, քեն, բերեն, ասում ա՝ բան չեն բերել, որ կասկածի տեղիք չտան, թաքնվելով եկել են, հետո պայմանավորվել են իրա հորեղբոր հետ, քրդերի հետ, ասում ա՝ քրդերը ճամփոն են դրել, իրանք եկել են» (Մուշեղ Գևորգյանի պարմությունից): « [Բիթլիսի] Սեխ գյուղից, ես մի բան էլ ասեմ, որ իսկական ա եղել էլի, իմ հայրը ամուսնացած է եղել, կին ունեցել, երկու հար աղջիկ ա ունեցել, փախնելու ժամանակ 15 թվականին իմ հոր մայրը հիվանդ ա եղել, իմ հերը մնացել ա իրա մոր մոր, իրա գյուղի հետ չի փախել: Բայց էղ ժամանակ, որ փախել են, ոնց ասեմ ձեզ, էլի, քրդական աշիրաթը, քրդական, վերջապես, մի ցեղապետ էղ գյուղի բոլոր ժողովրդին բերել ա հասցրել ա մինչև սահմանը, սահմանից էլ ինքը չի եկել, սակ ա էղ էլ արդեն ոռոսական բանակն ա, անցեք, էնդեղ ձեզ ոչ մի վրանց չի պատահի: Իրանք եկել են մինչև Էջմիածին» (Սամվել Միրզոյանի պարմածից): «Գիտեք, Ավարք գյուղը ընդամենը... վեց տան ա եղել, երեք տան քուրդ են եղել, երեքը՝ հայ: Լավ հիշում եմ՝ պարմում էին, ասում էին քուրդը ... Լցվում են իրանց գյուղը ու սկսում են ջարդել, կորուրում էին: Վերջը սաղմ են քուրդը՝ շիզոնների մեծը, իրանց տեր ա կանգնում: Շիզոն՝ քրդերի ցեղ ա, որոնք հայերին սկի չեն կորուրել: Լավ հիշում եմ՝ ասում էին՝ Մրադի անունով մեծը, ասում են՝ իրանց կախնիները հայեր են եղել, իրանք տեր են կանգնել էղ ընդհանրիներին, ու ոչ մի բան իրանց, ըստնց իջնում են Մուշ: Ծանապարհին իրա հերը՝ հորս հերը՝ պապես, շոքրա սակով՝ փիֆ երևի, հորեղբայրս մեռնում է, թաղում են, իրանց հորն էլ են թաղում, ասում է Դոնոբարե, թե ինչ գյուղ ա, ինչ քաղաք ա՝ չգիտեմ, ընդդեմ ա թաղում իրա հորն էլ, քոչում են, փախնում են...» (Վազգեն Առկապյանի պարմությունից):

1 «Շիզո» կամ «շեկո» քրդական ցեղախմբի օգնության մասին հիշողությունները մեր գրուցակիցների պարմություններում հաճախ են հանդիպել:

Այս կարգի պարմությունների կողքին ընդհանրական հիշողություններն առար կյոթ են պարունակում ջարդերին քրդերի մասնակցության մասին (Գրիշ Բաղայան, Անահիտ Ղովսեփյան, Այմասր Նարությունյան): Մեր գրուցակիցների ընդհանրական պարմությունների ու սոցիալական հիշողության հանրագումարը փախ է հետևյալ պարկերը. քրդերը մասնակցել են կորուրածներին, «բայց մարդ թուրքերն են արել» (Գրիշ Բաղայան), «...էղ փարածքը, էղ գյուղերը, որ սպրել են, քրդական գյուղեր են եղել, դե բնականաբար առաջին հարվածը քրդերի կողմից ա եղել, բայց, ըստ իրենց պարմելու, շար դեպքերում նույնիսկ քրդերը օգնել են: Այսինքն՝ ովքեր քրդի ուղղակի ծանոթություն ունեցել են, նրանք օգնել են» (Արթակ Ղովսեփյան): Մեր պարմողներից երկուսի՝ Նրաչ Ղովհաննիսյանի ու իր զարմիկի միջև գրուցի ժամանակ նույնիսկ վեճ բացվեց այս հարցի շուրջ, որն առանց խմբագրելու կամ մեկնաբանելու ամբողջովին ներկայացնում ենք.

Նրաչ Ղովհաննիսյան - Մեկը մեկից բեթար, նրանք մուսուլման ազգեր են, երկուսն էլ մուսուլման ազգեր են, և ես նորից եմ կրկնում, թուրքերը շարքիչ են մեզ կորուրել, լրիվ քրդերն են մեզ շարք կորուրել, հանել թափել դուրս, խաբւելովով, որ թուրքը ասում ա, պարմությունն ա ասում, ընկել քրդեր, դոք կորուրեք հայերին, մենք ձեզ պետություն, պետականություն կրանք, և խաբեց պետականություն չտվեց...

Ջարմիկը - Չէ, ես հոպարի հետ համամիտ չեմ, որովհետև էստեղ թուրքական քաղաքականությունն ա հաղթանակել, նրանք, գիտակցելով հանդերձ, չեն ուզեցել մեծ մասը իրանց ձեռքով անել, քրդերին ստիպել են, որ էղ անեն: Քրդերը, նաև պապի պարմելով, քրդերից շար մարդիկ են եղել, որ հայերին պահել են տները: Տարին ճիշտ ա, տարին հեռա կասի, որովհետև պապին շար էր պարմում, որ քրդերից շար-շար մարդիկ են պահել հայերին տներում, որպեսզի թուրքերը չկորուրեն... Չգիտեմ, ինչքան էլ ուզենան համոզել, ճիշտ ա, եղել ա քրդական բանակ, թուրքերի հետ համագործակցել են, բայց քրդերը մեզ շար են օգնել, 100 տոկոս:

Այս վեճն, ակնհայտորեն, կրում է ցեղասպանության շուրջ հետազա քննարկումների, գրականության մեջ արձարծված խնդիրների, դրանց հետևանքով ձևավորված սոցիալական հիշողության և անհարակալ փորձի փոխանցման ազդեցությունը, ինչն, ըստ էության, բնորոշ է առհասարակ հայաստանյան հասարակության՝ ցեղասպանության մասին պարկերացումներին:

ԽՈՍԵԼ-ԼՈՒԵԼ, ՊԱՏՄԵԼ-ՉՊԱՏՄԵԼ («Իմ ծնողները խուսափում էին այդ մասին խոսելուց»)

Արդեն խոսվեց այն մասին, որ փրկվածների՝ Արևելյան Նայսարանում ապաստանած մասն իրենց ողբերգության մասին հանրային արտահայտման դժվարություններ ուներ և նրանց կենսագրության այդ հարվածի հիշողությունները մնում էին կա՛մ սոցիալական միկրոցանցի, կա՛մ ընփանիքի շրջանակներում: Պարմել-չպարմելու խնդիրը, սակայն, կապված էր և կապված է նաև մարդու անհարակա ընփրության, աշխարհայացքի, նրան շրջապատող մարդկանց լսելու պարբերականության և մի շարք այլ հարցերի հետ: Բոլորը չէ, որ կարողանում կամ ուզում էին պարմել իրենց կյանքի այդ դժվարին հարվածի մասին: Ամեն ինչի մասին չէ, որ նրանք կարող էին կամ ուզում էին պարմել: Պարմել-չպարմելու, խոսել-լսելու ձևերը նույնպես փարբեր էին և շարունակում են փարբեր մնալ:

Դարելով ըստ մեր գրուցակիցների հիշողությունների՝ ընփանիքներում ջարդերի կամ փախուստի մասին պարմությունների փոխանցման գլխավոր աղբյուրը կանայք են եղել: Ոմանք անընդհար, բոլորի հետ խոսում էին իրենց հետ պարտաճակի, իրենց փեսաների, իրենց դառնությունների մասին: Ոմանք անընդհար լաց էին լինում: Գրիշ Բաղայանի և Նոանհարի մայրն իր հեղափոխ չարքաշ կյանքի ամեն օրը լցնում էր իր ծնողների և մեծ ընփանիքի անդամների պարմություններով՝ իր զավակներին դարձնելով իր փառապանքների ակամա մասնակիցը: Մինչև այսօր նրանք, լինելով փարբեց մարդիկ, առանց արցունքի չեն խոսում այդ մասին: Այնպես Նարությունյանի՝ 13 փարեկանում փրկված մայրը մինչև իր կյանքի վերջն ամեն օր մղկտում էր՝ հիշելով իր մոր ծանրագույն փառապանքները: Ընդ որում, Այմասի մոր՝ Նայկանուշի պարմություններում «թուրք» բառը համարյա չկա, հիմնականում նրանց փառապանքի պարմությունն է: Նայկանուշը պարմելիս իրենց փառապանքի պարմանքներին չի անդրադարձել, մեղավորներ չի փնտրել... Նա միայն պարմում ու պարմում էր իրենց՝ իր հոր, մոր սպանությունը, իր մանկահասակ քրոջ ու եղբոր մահը սովից ու ցրտից ու իր փեսաճ անավոր փեսարանները: Զարմանալի է, թե ինչքան քիչ է Նայկանուշի պարմություններում իր անձնական գրկանքների թեման: Նրա ամենօրյա ողբերգությունն էր, որ Այմասին մղեց թղթին հանձնել մոր պարմությունները և գիրք հրատարակել: Դա մասամբ թեթևացրել է Նայկանուշի կյանքը: Նայկանուշին թվում էր, որ եթե շար մարդ իմանա իր մոր հետ կարարվածի մասին, մայրն այն աշխարհում ավելի թեթևացած կլինի:

Տղամարդիկ ավելի քիչ էին խոսում, և նրանց պարմությունների նյութը մասամբ փարբերվում էր կանանց պարմություններից: Նախ՝ քանի որ փղամարդիկ ավելի շար էին սպանվել, փրկվածների մեջ նրանք ավելի քիչ էին: Երկրորդ՝ ըստ երևույթին այս առումով դեր է խաղացել փղամարդկանց մեղքի զգացումը. նրանք պետք է օգնեին իրենց ընփանիքի անդամներին և չէին կարողացել դա անել: Նրանց արժանապարվությունն ավելի խոցված էր, ուստի հիշելու, պարմելու դժվարություն ունեին: Եթե փրկված փղամարդիկ, փրկությունից հետո նոր դժվարությունների բախվելով (որքացած երեխաներին խնամելու, աշխատանք ու ապրելու միջոցներ գտնելու և այլն), չէին բարոյալքվում և կորցնում մարդկային դեմքը, ապա հիմնականում լռում էին կամ, ինչպես հիշում են նրանց զավակները՝ այսօրվա մեր պարմողները, խոսում էին հիմնականում միմյանց հետ: Իրենց զավակների հարցերին պարտախանում էին կա՛մ շար լակոնիկ, կա՛մ խոսում էին հիմնականում ինքնապաշարպանությանն իրենց մասնակցելու մասին:

Տղամարդկանց և կանանց հիշողությունների փոխանցման թե՛ բովանդակությունը, թե՛ ձևերը փարբեր էին նաև հեղափոխում, երբ փրկված երեխաները մեծացան: Տղաները մեծանալով ավելի շար գրել են, քան բանավոր պարմել: Գրում էին «իրենք



1958 թ. լուսանկար: Չախից երկրորդը՝ փոքրամարմին կինը Դուրեն է

իրենց համար»: Մի դեպքում սա բացատրվում է նրանով, որ թեմայի փակվածության պայմաններում գրածը փարածելու, հանրայնացնելու խնդիրներ կային, մյուս դեպքում, հավանաբար, գրելու շարժառիթով: Նավանական է, որ գրելը հոգում կուրակվածից մասամբ ազատվելու միջոցներից մեկն էր:


Աղջիկները մեծանալով մանրամասներ էին պարմում նույնիսկ ամենադաճան երևույթների մասին: Տղամարդիկ խուսափում էին մանրամասներից: Մինչև այսօր կան այս երևույթները: Թախիսի Աշնակ գյուղում Էլյա Դավթյանը մանրամասնորեն պարմում էր իր կեսրայրի հորաքրոջ հետ կարարվածի դաժան պարմությունն այն մասին, թե ինչպես է Տավրիկի Նոսուր գյուղում ընփանիքի բոլոր անդամների կոտորվելուց հետո երիտասարդ կինն իր երկու երեխաների՝ դստեր ու որդու հետ միայնակ փախել. «Անունը Դուրեն էր: Ծանապախիկն նախ աղջիկն է մասնացել, սովից: Նախ ապա ինքն էր հանդիպել,



Տալվորիկի Նոսուր գյուղից փրկված Նամգե Դըճուկը, որի ընտանիքում ապաստանել է Դուրեն և ով կարողացել է օգնել այլ փրկվածներին

